



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





ՀԱՅԻ-Բ ԲՈՒԺԱՄԱՐԱ ԲԱՐ  
W 2031  
DOC NUL 100

891.99

5-97

այս

Տ. ԳԵՂ. ՑՈՒՂՈՒՐԵԱՆ

16 NOV 2011

# ԱԴՐԱՑԻ ՀԱԼ



ԹԻՖԼԻՍ

Տպ. կ. Մարտիրոսյանցի—Տպ. կ. Մարտիրոսյանցի

1902

20 JUN 2013

91157

1105 VOM 6.7.

Дозволено Цензурою 27 Ноября 1901 г. г. Тифлисъ

## ԱՂՋԱՍԻ ՀԱԼԱ

Ա

Սիրտ ուստող վաշխառուները Կ. գիւղացի Մէջլում ապնումն էլ հալ, հարաքեաթ չէին թողել: Այնպէս զիշտել, այնպէս այլանդակել էին նրա աստուածային պատկերն ու կերպարանքը, որ լեզուով պատմել ու դրչով խկազիս նկարագրելն անկարելի է:

1892 թուականի ամառուայ մի կիրակի օր, երբ ամեն ոք իւր կիրակնօրեայ՝ նոր հագուստը հագած դուրս էր եկել զիւղամէջ և տանուտէրի ու զզրի առաջ բարձր-բարձր ձայնով իւր դատը պաշտպանում էր համարձակ, զիշտուած, կարծես անօրէնի հողում գայլերի բերանն ընկած, Մէջլումն ու Միքէլը տանից դուրս արած որբերի նման քաշուել էին մի կիսաւեր չափարի տակ և ախ ու վախով հոգոց քաշելով, մէկը միւսի ետևից թուում էին իրենց քաշած ու քաշելիք սլւ-սկ օրերը:

Լսած ու տեսածիցս առաջ, թէ ինչով էին սկսել նրանք իրենց խօսակցութիւնը, զգիտեմ, իսկ երբ կարճ ժամանակում աղքատութիւնից ինչ-ինչ միջոցներով յանկարծ հարստութեան տէր դարձած

նրանց համագիւղացի մի մարդ, կարծես դիտմամբ իրեն ցոյց տալով՝ առանց ուշադրութեան և ողջունի մօտներից խիստ փքուած անցաւ, Մէջլում ապին սրտմտած և խղճուկ ձախով ետեիցն այսպէս բացականչեց:

— Ա՛! օխնւած, եանի ինչո՞ւ չի մի սուտ բարի օր էլա տւիր, վլսծար թէ մեզանից Ասծու բարու տեղ՝ Աստծու ալաւ կրակ, չոռ ու ցաւ, քար ու քացախ առնե՞ս: Տօ անիրաւ, ասենք թէ քեասիր ենք, բա մենք մարդիկ չե՞նք...

Ընկերոջ նկատողութեան միջոցին Միքէլի կուլ գնացած աչքերը թիկունքը ցոյց տալով գնացողի-ետեից պէլացած էին մնացել: Նա մի առ ժամանակ այսպէս մնալուց յետոյ, կարծես վրէժինդրութեամբ լցուած, դարձաւ ընկերին և ասաց.

— Ինչի՞ պտի բարի օր տայ, հագած կապած, քէփը քէօք՝ մէջ ըուտրմ ա, զրադ ման գալի բեղերը սրած, շատ վէջն ա, որ մենք սախտա ենք ըկել...

— Հա, էն վաղ էր, ինչ էշը կաղ էր, հըմի դա մեր թայը խու չի, մեղ նման փալանը փորի տակը խու չի ընկել ու բեռը ցեխումը մնացել, որ լայեղ անի բարի օր տայ, բարի օր առնի: Գա հըմի խու չի ասըմ, թէ ինքը ճուտի խաշուի համար դռներիցը վիւլի ժեփուով եղ ուղող էն քո՞ո Մագոյի տղէն ա, ասմա՞ ես հըլէ էսա սըհէ ունե՞որ եմ ծնուել... Ամա թող տըհէնց ասի. ասողի է ջանին

մատաղ, առել ա «սանա դա զալմագ»—քեզ էլ չի մնակ, ջըի բերածը ջուրը կտանի...  
— Է՛, ասողն օխնւի, Միքէլ ջան, ասել ա, ամա դա էսօր հլա ուտրմ, խմում, ապրում ա, դու հլէ յոյսդ ընդուր վրայ դիր, թէ «օնադա զալմիա-ջալդր»։ դու հլէ ինչքան կուզես մօր կաթնին հասրաթ, մնացած եթիմ էրեխի նման բերնիդ ջուրը թափիլով պուշկիբ, մտիկ արա...

— Աղպէր. արի ես անիծեմ դու ասա ամէն է, ինչ անենք, տո դրանց անօրէն հոգին հուրը մաշի:

— Ամէն, տէր Աստօծ, ամա ուր աոր, լսող, կատարողը Դու ըլես, — երկնքին դառնալով, ինդրեց Միքէլը:

— Պրանք, էդ հոգի ծախողնին, սկի թողը են, որ մենք էլ ապլե՞նք. թողմ են, որ մենք էլ ուտե՞նք, — շարունակեց նա:

— Ո՞րտեղից. կերածներս էլ հարամում, կորեկ կերած եղան նման քժներիս ծակերով են հանում. տենըմ չես:

— Հա, քո՞ո խու չեմ, բա ի՞նչ եմ անըմ, որ տենըմ չեմ:

— Օ՛, խարջի, կոռ ու բէգիառի, թագաւերի զըհար-զըսամաթի համար տեղներս նեղացած, սոված, եա թէ չէ, լաշներս բաց մնացած վախտներս մի մանէթ, էրկու մանէթ փող, մի թաղար կուտ, թէ կուզէ հէնց վիափիսացուի համար մի ուլի մորթի

տուողն էլ, վեջը փող շինելուց, էլ անտէր սանաթ-ները փոխփխատելուց, էլ շահի շահին էլ շահ առնե-լուց չի կշտանում, ու չի կշտանում...

— Ինչի՞ ես ասըմ շահի շահին էլ շահ առ-նելուց, վախը ես սազա՞չ, որ ասես թէ՝ էլ գլխը-ներիս կրակ թափիլուց, ջաններս բարբար անիլուց չեն կշտանում...

— Թըհէնց ա, ամա կրակն էլի ողորմած ա, մի անգամից ա էրըմ պրծըմ. դրանք, էդ ասեղ մաշկող անիրաւնին որ կան, արնածարաւ հարամի տղըուկի պէս դնչները բուդներս խրած, հայհարայ տուած՝ ծծում են ու ծծում անկշտում, որ արնա-քամ անեն մեզ պէս անճարներին, որ ծուխներք կտրեն օջաղներումս ու տուններս քանդեն գլխներիս։ Սըհէնց չի...

— Բա մնց ա. բա էդ արնկերնին չեն պատ-ճառը, որ մենք՝ տարին տասներկու ամիս ամեն օր արին-քրտինք գցելով, գիշեր-ցերեկ աշխատըմ ենք ու ոչ ջրօրիննենք ունենք, ոչ զատիկ, ոչ լի օր, ոչ կիրակի, չմ գլխներիս հարամ, միշտ բահն ու թին, լինդ ու քլոնգը, կացինն ու հուրագը ձեռներիս, մանգեղ, գերանդին ուսներիս, եա թէ չէ, կողքներս կոշտ մաժին դէմ տուած, մի կտոր եաղու ու մահման էլած ճաթի համար քար ու փետ ենք կրծում, հող ու մոխիր լիդ տալիս, հալւըմ մաշւըմ, կարձ շան քթիցն էլ ջուր ենք խմըմ, ամա էլի եալսէքըս

պատուած, էլի ծունդներս ծակ, անտրեխ, անփա-փախ, էլի պատառներս չոր ու ցամաք, ծանդր-ծան-դըր պարտքերն էլի էս խեղճ շնչքներիս ու շնչքնե-րիս...

— Ա՛խ, որ մինն ես ասըմ ու մէկէլը թողըմ, շատ վախտ հու, աչքս ճպում արտասունքի տեղ արին եմ կաթացնում, — հառաչանքով նկատեց Մէջլում ապին, — մի հլա, թէ Աստօծ կսիրես, քրքրուած լա-շիս մտիկ արա. հլէլի թէ անօրէնի թօրփաղում զուրդ ու զուշի ճանդ ըլեմ ընկած...

— Բա ե՞ս: Խս տարսէն մարդ եմ, մազս սիպ-տակեց, ատամնիս էլ էսա լիսկիլսկոյն են ընկել, մի-այն սիրտս ուղեց, աչքս վրա մնաց, որ մըհէտ էլ ես մի թազա արխալուղ կ'ենամ, մի զրմբոց լսած վախտս մի մանէթ փող, եա հլէ հէչ օլմասա, մի ուսկամբ' էլ ես ջիբս դրած մի բարեկամի հարսանիք գը-նամ, կարձ՝ սրտալի մարդամէջ գուս գամ, որ, մինն էրկուսն էլ ինձ ասի թէ՝ սա էլ մարդ ա, սա էլ Ասծու ստեղծած ա...

— Միքէլ ջան. էդ չի մեծ ցաւը, էդ. զրկողու-թենին էլ կգիմանանք, ոչինչ, առանց հարսանիք գնալու կրտորուկի չենք. դա խու արևելցն ու անձ-րեկիցը դժար բան չի, որ դիմանում ենք. դժարն էն ա, որ դոստ ու դուշմանի առաջ էս հալին գեղա-մէջ ենք գուս գալիս:

— Օ՛հ, աղպէր, զու զրանով խելքահան արիր

ինձու սրտիս թելերը կտրեցիր. իլհաքիմ (մանաւանդ) էն սև սըհաթին, երբ անիրաւնին (հարկահանները) միմոն պարածողի դաւթարը կռնակներին, կալերի քաշերին կաղնած, հօրն ու մօրս գերեզմանին ուշունց տալով, ցաւ ու կրակ խարջ են պահանջում ջաններս խորովելով:

— Պորթ ա, աղքատութինը համեշ ա աշխարհի փեշակն ա, ամա սըհէնց էլ աղքատութին. չուխիս ծանվերն առաջս եմ քաշում, ծնկներս ոնց որ ա ծածկում, աղպքնին դուս գալիս, ամա վայ էն դուս գալուն, սրտից արին, ջիգարից վարամ, աչքերից կրակ, քթից մուխ ա դուս գալիս, ու, հմանչիլուց մեղատորի նման էլ կարըմ չեմ թէ վերև մտիկ անեմ:

— Խեղճ իմ ընկեր. բա որ էդ հալիդ ու խարջըն ուղելու բհարին զզրի կոպալն էլ տուր թէ կըտաս տուրզիդ տրաքըմ ա.—ակամայ և դառն ծիծաղով նկատեց Մէջլումը:

— Էդ. էդ հու էրուած սրտին սոխ մխիթար, ամեն ինչ դգւրմ, պիծընըմ ա էլի: Ճարումս ճար չկայ, որ մահ գառնամ բուգները կվաղեմ. ամեն մի ուշունց լսելիս, ջանը մղմուղ ընկած մոլի եա էփած հաւի մսի պէս, միսս վրէս վեր ա թափւըմ, փթուր, փթուր գալիս. թամամ կէս մարդ եմ դառնըմ, էնպէս հալւըմ հալածակւում եմ...

— Կէս մարդ ես ասում, ասա Ասծուց մահ եմ խնդրում, մահ:

— Մարդի նամուս ու աբուռը գնալուց ետը քաս մահ խնդրելու չի:

— Տօ, ա Աստծու. փառքը շատ ըլի, ասենք թէ էս ըրիցի տարածներս են ձուիկ-ձուիկ ըլել՝ հէնց լանթ ու փթուր դառել, որ գոմի դռան ձեղքերը կանիլու էլ պէտք չեն, ասենք թէ էս ջարդած, խշրւած, փշրւած, էփած լաշներս ա բաց, բս ընդուր ինչ ասենք, որ մի-մի աբասանոց աղլուխն էլ զըհատ ա ըլել, թէ կէ ցաւելիս ու տրաքուելիս էլա գլխներիս հուպ տանք: Պահ, պահ, պահ, դժար թէ սրանից դէնն էլ Ասծու պատիճ ըլի: Եանի կմյ, դուն ասա, հը:

Ասում, յուգւում ու հարցնում էր Մէջլում ապին, որ աղքատի պէս-պէս ցաւերն ու հեծեծանքները չէ թէ միայն լեզով ու մորմոքիչ յեղյեղիչ ձայնովն էր արտայատում, այլ և մարմնի բոլոր բողոքիչ մարմիկներով, որոնք կարծես կամ խաղահան էին լինում և կամ լեզու առած աղքատի ու սև օրերը ողբում անվերջ:

Թէմքն ալլայլում էր անդադար, վիշտ, թախիծ, դառնութիւն, նախանձ, բարկութիւն, վրէթինդրութիւն ու այս բոլորն իրար խառնում: Փորը կարծես եփ էր գալիս և սիրտը ձիաւոր դառնում: Յօնքերն ամպոտում էին և կրակւում, մուալլոտում: Ճակատի ծալքը ծալքի ետևից կնճիւներ էր տալիս և ճնշուած կրծքից ու սրտից քթածակերով

թթւստ մուխ դուրս զալիս: Խսկ թէ ումն էին ուղղուած այնքան զանգատներն ու հեծեծանքները, այդ չէր իմացւում: Արդեօք այն լայնատարած դաշտերին ու հովիտներին, ուր վաշխառուների երամերամ և ընդարձակ արտերն էին սփռուած, և, ուր դեռ էլի պիտի հատնէր նրանց՝ գերի դարձած աղքատների, առանց այն էլ սպառուած ոյժը: Արդեօք զանդատում էին վերին քօլերին, ուր ծակուամուտ զագանների այնքան մութն ու խաւար և ահռելի որջերն էին փորուած, խոռոշուած, թէ առաջները արձանացած այն մեծ սարին, որ դարերից հետէ լուռ վկայի նման պապանձուած ոչինչ չէր պատասխանուում:

— Վահ, սրանից գէնն էլ Ասծու պատիժ...

Վերջին խօսքը նորից կրկնելով, Մէջլումն ուղում էր շարունակել իւր զանգատը, բայց նրա ընկերը որսորդի հրացանի ճայթիւնը լսած անմեղ եղջերուի նման յանկարծ զլուխը վեր թռցրեց և ահաբեկուած, մերթ գէպի զիւղը նայելով, և մերթ ընկերին դառնալով, ու ձեռի ափով փակելով նրա բերանը, կտրեց խօսակցութիւնը, «սուս, տենանք» — բացականչեց նա. «անիրաւնին էլի մարդ են սպանում»:

— Ուհ, շատ գէշ ա ձէն ածում. հալբաթ կողքին տուին, որ նհէ բառանչեց դիլկոխ ըլած եղան նման:

— Հրէ էլի տաւին, վեր զցեցին:

— Քաշ են տալին, — դիմաց դուրս գալ չփստահանալով, ցանկապատը, երեսներն առած՝ գէօրակի վոյ-վոյից վախեցած ճուտերի նման, նախ շշունչներով և ապա լռութեամբ սկսեցին դիտել գիւղամիջին:

Բ

Այնտեղ, գիւղամիջում մի չարդախաւոր դատարանի առաջ մի սարսափելի բարբառոսութիւն էր կատարուում:

Վաշխառու Ղակրաման աղէն Մէջլումի բողդակիցներից մինին պարտքի երեսից փակուած թագնուած տեղից դուրս էր քարշել և ոտքի տակ տուած քեչի պէս հարում էր անսղորմաբար:

— Տօ թան լափողի տղայ, ես քեզ չ'ասի թէ, առանց գաւի դառարի փողը բեր տուր իր շահովը: Հարամզադա, քեզ չ'ասի թէ դիւանի չգցես, որ մինին էրկու չտան: Մհետ էրկու հետ ասիլովս էլ հրականրմ չիր.

Լքատրակի թոխում, գոմի ախոռումը տապ անիլով իր ուզում ձեռիցս ազատուես: Որ ասըմի, թէ ինքն իր կամքով լծան տակը մտնող եղան պէս, ինչքան ուզըմ եմ բեր, տուր, ինչի չի՞ անկաջ ունըմ. խելքդ ում վըա էր գնում, զիւդըմ չի՞ր, որ վիզդ թոկ զցած միմոն եմ շինելու ու պար ածեմ սըհէնց: Գէ հըմի պար արի, փրսնդ արա. տհէ, հոն

Վեզ տուրք իս քառ ընդհներով չէիր լսում, էս ձեռներովդ չիր բերը մ փողերը ու, էս ոտներով իր փախչըմ, տապ անըմ, — Հերսոտած փրփրած որոտում էր նա և ձեռի փայտով աղքատի գլուխը, կողերն ու թիկունքը, ձեռն ու ոտը ջարդելուց յետոյ, մտրակի կոթն էլ ականջը կոխում, իսկ նա կրակի մէջ այրուղի նման աղաղակում, դէս ու դէն դուրս էր թուշում և աղիողոմ ձայնով օգնութիւն էր խնդրում:

— Վայ! Վայ ազատեցէք, աչքս հանեց, ձեզ մատաղ. թէ ձեր որդկերանց արեւը կսիրէք, թողալ միք, ինձ մորթը են... վայ...

Բայց աւազ. օգնութեան գէթ մի շարժում անող չէր նկատում, գագանի ձեռից ազատել ոչ ոք չէր համարձակում, իսկ նա աղքատի «դունչը տափերը քսելով», պարծենում էր խրոխտագին:

— Հա. դհէ վայ, հարայ կանչիր, տեսամ ով ա էն օխտը գլխանին, որ մօտ ա գալու ու քեզ պէս շանը խլի իմ ձեռքից:

Հա, էդպէս, ինչքան ջանմդ ջան կայ, զայիմ կէօռա որ, բիրդան վախցնես ինձ, — ասըմ էր վզակոթը շիլի նման կարմրացրած դեր, և, կարծես խիղճն ու հաւատը կորցրած կռապաշտի պէս, չէր ուզում կշտանալ ոչ փայտի և ոչ էլ սմբակակլունկ և ծուռ ծուռ լափչիններով հասցրած աքացիններից, որոնց տակ անարգողի ձայնն արգէն կտրուելու վըրայ էր և իւր հեռող մարմնի դառն կոկիծն ար-

տայալտում էր հիւանդի հատած ու նուաղած, անցոյս «վայ վայ»-ով, որը, սակայն, այնքան անողորմ ու մորմոքիչ էր, որ առանց սրտի լուզման և արցունքի լսելն անգժութիւն և մեծ աօիացութիւն պիտի լինէր:

Բայց վաշխառուն չէր խղճում և այդ ձայնին: Ընդհակառակն, նա աւելի ևս խրոխտացած իւր անպատիժ ովտի ու կարողութեան վրայ, հրամայեց իւր «նէօքար կրչուած «գեադաներին», որ, Աստուծոյ հալից ընկած աղքատին քարշ տան մորթուած կենդանու պէս:

— Վեկալէք, քաջ տուէք շան պէս, քաջ տուէք, ես դրա միսն ուտիլ, ոսկրներիցն էլ ըլի, փողս հանիլ պտեմ, — սպառնում էր նա և լուռ հանդիսականների առաջ իւր քոսոտ լափչինների ծուռ-ծուռ կրընկներին ու կտցին նայելով, ձեռքերը ետեին դրած՝ հպարտութեամբ քալում: Իսկ «գեադաները» վրայ թափիուած անմեղ զոհին, սարվաղների նման նրան քարշ էին տալիս դէպի դատարան...

¶

Ճոգն ընկել, կծպծան արեղակն այնպէս կիզում էր, որ գլխին քեչի պէս խիտ մազ ունեցող բոին էլ գլուխը ստուերից հանելուն պէս քաչալի նման խզատակը քորում, քուցին-քուցին էր անում:

«Ողորմածիկ» տատս մի ժամանակ գուր էր ինձ նախապաշարել թէ «Նալթէօքանից փչող քամին յըբէնսական ուշաբի բերանից ա դուս զալիս, ընդուր էլ անհատ անպակաս ա»։ Ոչ մի կողմից հով չկար. վիշապն էլ էր բերանը փակել, չար դևն էլ։ Եւ այն էր պատճառը, որ, երբ դատարանի շուրջը կիտուած համադիւղացիների խումբը, հովուի ետևից ստուերը քաշուող հօտի նման, վաշխառուի ետևից ներս քաշուեց, դուրս՝ գիւղումն էլ մարդ չ'երևաց։ Կտրները և բաշերը դուրս եկած բոլոր հանդիսատեսները նոյնպէս իրենց խրճիթներն էին քաշուել։

Փիւրից դուրս էլ շունչ չէր նշմարւում։ Հընձի, փնչի գնացող, այգին ջրող և խուրձ կրող մարդ չկար, որովհետև սուրբ կիրակին, շնորհիւ Կ. գիւղի սրբակրօն հանգուցեալ տէր Պովօիսի աւանդի, խիստ պինդ էր պահւում... (ձեւականապէս)։

Դուրսը՝ բացի բելում ուտող մի կոռի գոմշից, աջ ու ձախ անկանոն ուղղութեամբ վզզող ու բռուղ ճանճերից և մի քանի անյագ չարթերից, ուրիշ կենդանու հետք էլ չէր նկատում։

Քիչ առաջ, իրենց սիրելի խուդուզների ու քուռակների հետ մեծ աղմուկով ու խիստ մազալու հանգներով՝ իրար բաշ կոծելով և իրար դնչի շըրըսկալէ աքացիներ զարկող վերջին խումբ աւանակներն էլ վաղել, գոմերն էին թափուել։ Երկնքի երեսին սաւառնող թուչուններն ևս, շողի, արևի ե-

ընսից փախել, ծառերի ճիւղերի արանքներն էին պղծել և կլափները բաց կալած՝ թեերով հով էին անում իրանց, էսկ մեր կոռիւն, չնայելով տապին, չնայելով՝ արեւ գիւղէլուն պէս գոմէշների ջուրը փախչելու, լողանալու սովորութեան, և չնայելով մէջքի խոցերը կտուտող այնքան արխւնարբու չարթերին ու արնոտած տեղերին վրաթափուած անթիւ ճանձերին, այնուամենայնիւ պինդ նստել էր կալի մէջ-տեղում ու պոչն անգամ չէր շարժում տեղից։

«Անկեզու հայվանին» տարին տասներկու ամիս լժան տակը քաշած՝ այնքան քշել ու ծեծել էր անդութ չութչին, որ վրան էլ միս չէր մնացել։ Մէջքի կաշին, ճապկի ճապատների անխիղճ հարուածների տակ, շերթ-շերթ վեր էր կացել ու լաշը վահրով լի խոցելով պատել։ Կոյն դրութեան մէջ էին նաև սնգիրներն ու կոճերը, որոնց վրա ո՞չ միայն ճապկի այլ և դաժի ճապատներ էին փշըրտուել ու կաշին պլոկել, կարմիր միսը բաց արել,

Բայց աւելի սոսկալին գոմշի ուսուն էր։ Լընահատ ուսըր սամախեղդից ուսել, չորացել ճաք-ճքուել, բարբադ էր եղել և ճաքերից արխւնը գնում, ճանթուերը դուրս էին թափուում։ Ֆեճուած, յոդնած ու տանջուած կենդանին, չնայելով գլխին ցցուած ահագին չախչախաւոր պողերին, որոնցով մի ժամանակ նախրի մէջ ցուկերին անգամ հալածական էր դարձնում և ամուր ցանկապատերը շալակում

անցնում, այդիներն աւելում, այժմ չարթերից ու ճանձերից էլ անպաշտպան էր մնագել:

Սակայն, խեղճ կենդանուն կարծես թէ այդ  
գեռ բաւական չէր. յանկարծ տանից դուրս եկաւ.  
Եիրու դիւղացին և ձեռի կոպալով չոր կոկոզներին  
մի քանի հարուած ևս հասցնելով, տեղից վեր կաց-  
րեց, որ տանի իրիկնաղէմին բարբադ ուսին նորից  
լուծը դնի...

— Տօ չըուլամիշ, տօ զիլի լափած, էս արևել  
ըռվսին ինչ ես էօլումդ հախ արել, վեր ընկել, հայ-  
վան ես վեկաց, գնա ջուր լակի, էլի. զշերս լուծն  
լուսին խու չեմ գնելու, — յանդիմանելով ասում էր  
չութչին և հալից ընկած լծկանի կոճերը կրկին ջար-  
դելով, քշում էր դէպի ջուրը:

Կ. գիւղում հէնց այս չուժքու՞ն և այն չարթերի գերն էին կատարում վաշխառուները, իսկ լըկանի անվերջ տանջանքի մէջ հեծում էին բոլոր աղքատները, որոնցից մէկին արնաթաթախ վայր էին ձգել խաւար դատարանի շէմքում, իսկ երկուն-Միքէլին ու Մէջլումին խիստ ահաբեկել ցանկապատի ետեղում:

— Տղա, վեր կաց կորչենք, մեղ էլ են դատա-  
րան քաշ տալու, — ահով պատաժ և քրտնած ճակա-  
տով! Մէջլում ապին 22նջաց ընկերի ականջումը:

— Ղստեղ չեն. մեզ քաշ տուողնին ըռւօտին  
սարն են կորել:

— Հաստատ գիտան, ով ասեց թէ նրանք սար են  
կորել, — յուսակը բուելով, հարցրեց Պէջումբ:

— Ես ինքս եմ տեհել. մին ըրիկունը կորաւ,  
մին էլ ըռաւօտս, լուսածէզին:

— Էդ լաւ ա, հլէ էսօր էլա անդաճնեղս զինջ կմնայ, — յուսացին, բայց երկուտով մի առ ժամանակ դարձեալ սկսեցին նայել ու պահել դատարանի շէմքո:

Իսկ թէ ինչ էր կատարւում ռամիկների դատարանի ներսը, գեռ յայտնի չէր, միայն բոլոր սրահներում ու խրճիթներում ամենքի խօսակցութիւնը Ղահրաման աղի բարբառոսութեան և Սաքնի տղի սրտաճմլիկ հեծեծանքի մասին էր:

Հաւանական գուշակութիւններ էլ էր անում հանդիսատես ամբոխը:

— ԽԵՂԾ Սաքնի տղայ, ջլիդ Հալից զցեցին, — ա-  
ասում էին Նրանգիդ ոմանք:

— Վալվահ, որ ապրի, մեծ բան կլնի:

—Ով գիտակ, կապը, թէ չէ, շատ ժակեցին:

—Թէ որ Էլի չժակեն, կապը:

— չա, եթէ ներսն էլ քեօխվէն թակի, էլ ապ-  
րիու ումիդ չի մնալ նրանում:

— չը՞մ, բռանց թակիլու, աղի սիրտը շահելու,  
նա ՞նց կղիմանայ:

— Դիւս պէս զամանակի տախունիքի (տունն Աստօծ քանդի. Կթակի բասի Խաչեաց տաճարի վեհ կաղնիլ:



— ի՞ւնչ, արդարին, գրա արդարութիւնն աբասումն ա, աբասումը. որտեղ աբասի ա ժաժ զամ, դա էլ մաթրախը ձեռին էն դոլիցն ա դալի:

— Անպատճառ, թիւմանին հինգ շահի ըռուշաթ կառնի ու Սաքնի տղի մնացած կոկալն էլ գըլխին պրիշակ կանի:

— Մըթամ քիչ ենք տեհել. վայ աղքատի սև օրին...

Այս գուշակութիւնների միջոցին դառն տեսարանից Մէջլումն ու Միքէլը երեսները դարձնենելով, նորից թփի տակն էին քաշուել և շարունակում էին իրենց դարդ ու ցաւերը:

— Միքէլ, — հարցրեց ընկերը, — իսելքդ ի՞նչ ակտրում. եանի սա ապրուստ ա, որ մենք ապրում ենք:

— Ի՞ւ. անտէր մնայ էսթաւուր ապրուստը, մըթամ մենք էլ ապրում ենք. հայ դէ դժոխքի չարչարմոնք ա, էլի, քաշըմ, չքչարըմ ենք:

— Հայ, դրուստ որ դժոխքի չքչարմոնքում ենք, վայ մեզ:

— Մէջլում ջան, ես ասըմ եմ հալբաթ էս էլ ա Աստծու արած բան:

— Ո՞րը:

— Է՞ս որ, դոդ Գիգնի տղի պատառիցը եղրն ու մեղրը ծլծում ա, մերն խակի ցամաք էլ չի ճարւըմ:

— Վալլահ ի՞նչ ասեմ, Միքէլ ջան. էսթաւուր

ապրիլուցը ես մեռնիլն աւելի սալահ եմ տենըմ, քանց թէ ապրիլը ի՞նչ կասես:

— Ե՞ս. ես խու քեզանից էլ մի երկու օր առաջ եմ սալահ տենըմ:

— Այս...

— Կսան էլի. էլ մւր ես ախ անըմ ու պահըմ:

— Ի՞նչ ասեմ, սրտըմս մի մեծ դարդ ունեմ, թէ չէ...

— Թէ չէ ի՞նչ:

— Թէ չէ հմի վաղ ի մեռել, համար...

— Երեխէքդ կլեն դարդդ:

— Աֆարին. էնդուր են ասել «մարդի դարդ, դարդ ունեցողը կիմանայ, է: Լաւ վրաբերիր. դարդս ջլբաց էրեխէքս են: Ոչ հէր ունեմ, ոչ մէր, ոչ հասած տղայ, ոչ էլ մի սրտակից աղբէր, բարեկամ. վախըմ եմ մեռնեմ, երեխէքս մնան անտէր-անտիրական, թուխսը կորցրած ճուտերի նման սվսվալիս: Ի՞նչ կասես:

— Ի՞նչ ասեմ, աղպէր. ասածդ դիւզ ա. էս այսամիս ինսանաթումըն էլ մրուաթ չի մնացել. քունոնցն էլ էնպէս կանեն, ինչ որ ուրիշներին են արել: Հէնց ոչ էլած զլուխդ վեղբերի թէ չէ, եղանաւորը, չափարդ ա քանդիլու, քլնգաւորը պատդ:

— Է՞ղպէս ա, հայ: Է՞ս... էլ խու չե՞ն ասիլու թէ ըստոնց շինողն էլ մի օր տանջուել, ըրչարուել ա իր եթիմների հմար. էլ խու չե՞ն ասիլու թէ մենք էլ ենք հողեղէն, մենք էլ ենք մեռնիլու...

— Ի՞նչ ես ասըմ. իմ, աչքիդ ըղաքին չի թամ-  
րազի տղայ Մուսնի էնդացդի խնամքով շինած տունը։  
ՏԵՀԱՐ ոչ ոնց քարոքանդ արին ու պակումն էլ  
սխտոր ցանեցին։

— Հայգիդի հայ: Խեղճ Մուսին Միոնիլուցը ետք  
մի եշատակ, մի մինուճար ժառանդ թողեց, որ իր  
ծուխը ծխի, ընդուր էլ էնքան քէօխալի ու զզրի  
մաժրախի, դադանակի տակ գցիլ տուին, էնքան իր  
սհարին էլ, որիշշի սհարին էլ կաղ ոտով կու զրբ-  
կեցին, տանձի կոժ դառած շլնքին խարջ ու զհար  
դրին, որ ողորմածիկ հողին հօրից եղը կէնտ իրեք  
տարի ապրեց: Է՞։ Ես մենակ մեռնիլու օրը չեմ  
գիտըմ, թէ չէ մեր գեղի լենրուէխ գիլանոնց ժէ-  
ները վաղուց եմ հմբարել, հայ..

Սպազայի մասին այսպէս դուշակելուց յետոյ,  
աչքերը լցրեց և մի քանի կաթիլ ալցունք զլորեց  
Մէջլում ապին, որի կմաղք դարձած դէմքին ու  
կերպարանքին նայող կարեկիցն արդարեւ չէր կա-  
րող սառնասիրու մնալ, չխղճալ և չարտասուել:

Ուրախ օր, առատ ու ցամաք աչք չունեցած  
երբէք, մեր աղքատ հայ եղբայրը միշտ մերկ, կեան-  
քի դառն հոգսերը կապարի բեռան նման բարձուած,  
ծանրացած մաշուած ուսերին, ամրող ընտանիքի  
հետ մի օր կիսակուշտ, տասն օր անօթի. սըզըթած  
ու քաղցած մնալուց գեղնագունել, բարսկել, ցա-  
մաքել, տեղնուտեղը չոր ուկոր էր դարձել: Կոյն

զրութեան մէջ նա շատ անգամ նոր հազուստ ու-  
նեցալ ընկեր-հարևանի սպառահելիս մայր մտած  
աչքերը ամօթխածութիւնից տափն էր կլում և մո-  
տովն այնպէս անցնում, որ կարծես ինքն էլ չէր  
սիրու անում իր վրայ նայել, ինքն էլ էր իր սիրու  
մաշող կերպարանքից զզուել:

Հարստի սեղանից թափուած փշրանքները հա-  
ւաքող Աստուծոյ դառնապիտ աղքատ Մէջլումը,  
հարկն ու բէդիառը քաշելուց յետոյ, ձեռին մնացած  
մի քանի կոսպէկ մշակավարձն էլ կնոջ ու երեխանց  
վրայ անելով, ինքը դարձեալ մնում էր տկլոր, ար-  
ևում այրուելիս, և կամ, ցրտում սքըթած վրբ-  
վթալիս:

— Ես ջառ ու ջահաննամը, ոնց որ ըլի՛, եղա-  
կդնամ, թող հէ օղուշաղիս ձեռն ու ոտն էլա ծած-  
կած մնայ, կնիկարմատ ա. խալիսի միջով ջաւըր գը-  
նալիս ամօթու կըօրանայ», — ասում էր նա:

Իսկ երբ հարևանները նկատում էին, թէ ին-  
չու նա գոնէ մի էժանագին, նոր կտաէ հալաւ չի  
առնում կուրծքը ծածկում, անձը մոռացած աղքա-  
տը խիստ վիրաւորուած և դառնութիւնով լի պա-  
տասխանում էր նրանց. «այ, աղպէր, այ ջանմ, որ  
ասըմ էք, առ, ախը ինչով առնեմ, ախը ինչի չէք  
դարդս ու ցաւերս իմանում:

Տօ տնաշիներ, պարտքերս իսկի թողում են  
վեկենամ վեր ընկած տեղիցը՝ որ առնեմ: Այս,

ախ. ընդուր են ասել թէ՝ կուշտը քաղցածին մանդը կբրդի, է: Եանի ա ձեր խէրը շատ ըլի. էդ խի՞ էք դհէ անդարդ խօսում, բա հէտ իմ սև սիրտը չի ուզմաւ, որ մ'հետ էլ ես եախէս նոր մանգամ:

Ախ, ինչ անեմ, ինչ ասեմ նրանց, որ ինձ էս օրին, էս հալին են հասցրել: Ի՛հ փառք ըլի իրան, հալքաթ թէ իմ ճակատի գիրն էլ մի կոտրած ձեռք էսպէս ա զրել:

Այսպէս, արևի էրած ցրտի տարած Մէջլում ապին, մէջքը շարունակ կռացրած, ապրուստի, աւելի պարտքեր վճարելու համար, հարուած ու բարակած շլնքը բեռը քաշող եզան նման միշտ ձգած սրա նրա հողում այնքան հնձել, տակուիք էր հանել, և կամ մարագի, գոմ ու գհուկի պակեր էր հատել, ու «չոքի-պուկի» անելով հողն ու քարը ուսով կրել, դուրս տուել, որ ամբողջ մարմինը, այն արևումն ընկած կոռի գոմշի կոկողների նման, պլուկուել, ջարդ էր դարձել: Նրա այդ օրին հասնելու պատճառն այն էր, որ իւր «չիլ ու չիփլախներին» սովից, ցաւից ու չոռից մի կերպ ազատի, մեծացնի, ապա սրան, նրան ծառայ տայ, որպէս զի նըրանց բերած, վաստակած գուօշների գումարով երկար ժամանակ իւր ճնշուած ուսերին կապալի նման ծանրացած սև պարտքն ու հոգսերը փոքր ինչ թեթևանցի, որպէս զի, կեանքի մէջ զոնէ մի երկու անգամ էլ ինքն ազատ շունչ քաշի, բայ-

զուշ պարտքատէրերի երեսը չտեսնի: Սակայն, աչքը բաց, խեղճն այդ աննախանձելի նպատակին էլ չհասաւ:

— Մէքէլ, քունըդ տարաւ, հա, — դարդու գուշակութիւններն ընդհատելով, Մէջլում ապին հարցրեց ննջող լնկերին, որը քաշալ գլուխն արդէն մի մամուռուած քարի վրայ վայր դրած՝ ննջում, նղղում էր խղճացած:

— Տարաւ, հա, — փակ աչքերով և յոդնած ձայնով պատասխանեց նա:

— Վալլահ, հէտ լաւ արաւ, որ նունջդ տարաւ, բեղարած ես: Ես էլ գլուխս վեր դնեմ. դարդերնիս ասիլու, հատացնիլու գարգեր չեն, քիչ էլ հանգստանանք ու տենանք էդոց ինչ ա գալու զլիներս, — քնիրակը քորելով ասաց Մէջլումն ու ինքն էլ թէքն ընկաւ չափարի տակին:

Մի քանի րոպէ անցած, երկուսն էլ շնչում էին հանդարդ ու խաղաղ, բայց անմեղ խաղաղութիւնը հետզհետէ խանգարւում էր ահաւոր երազներով, որոնց մէջ թւում էր թէ Ղահրաման աղէն կամ Գիգնի տղէն դիւական կերպարանքով վրա են տալիս պարտատանջ աղքատներին:

Մէքէլից բոլորովին բան չէր հասկացւում: Նա լուս շրթունքները մրմնջեցնում էր ու շամփիրածի նման ուսերը վեր-վեր թուցնում, իսկ Մէջլում ապին երազում սարսափահար խօսում ու հարցնում էր ինքն իրեն:

— չ՞ը, — վայ թէ էն անօրէն անհոգին էգուց գայ  
ու ինձ էլ Սաքնի տղի օրը զցի՞։ Վայ թէ չժողի հունձ  
գնամ ինձ համար...։ Ա՞խ, եարաբ ազատուիլու եմ էս  
անտէր պարտքերիցը՞ս, թէ հլէ, ջհուղի թորփաղն ըն-  
կածի պէս, ահը սրտըմս, մահը մտքըմս, սև գիլը ճա-  
կատիս, սհէս, էս հալիս էլ հնդն եմ մտնիլու։ չ՞ը,  
Միքէլ, Միքէլ, արա մանմ չնս... Վեկաց, տօ, վեկաց  
փախչենք, հրէ դալիս ա, հրէ հրէ...

Այսպէս, հոգիառն աչքին երևեցած յուսահատ  
հիւանդի նման մըմնջացող Մէջլում ապին երևի դեռ  
էլի երկար կշարունակէր զէլը տալ, եթէ նրանցից  
մօտիկ տանձենու շուաքը շուտով վրաները ըը ընկ-  
նէր ու հով չանէր։

Երկու վշտակիցները նորից շնչեցին խաղաղ և  
անմեղ։ Դեռ խաղաղ էր նաև գիւղական առնոտ  
դատարանի դուռը։

### Թ

Դատարանը հողածածկ և ասիական պոջաւոր  
սլւների վրայ հաստատուած սրահաւոր մի բնակա-  
րան էր գիւղի կենդրոնում, որ իբրև սեպհականու-  
թիւն, պատկանում էր տանուտէր Պետովին։

Պետօն սկզբում ըրբան էր, յետոյ տաւարի ու  
ոչխարի գող, չարչի, գուքանչի, քեադխուգա, վաշ-  
խառու և վերջը դարձաւ տանուտէր։ Կա իբրև

մարդ՝ անդութ՝ էր. իբրև քրիստոնիայ՝ անհաւատ  
էր. իբրև վաշխառու ագահ և անողորմ, իսկ իբրև  
դատաւոր անսահման անհրատ և անարդար։

Տանուտէրութիւնից առաջ գիւղացիները նրան  
մի քանի յատուկ և յարմար մականնուններ  
էին տուել։ Նրան անուանում էին «Զալլըմ Պե-  
տօ, Ղոմփար, Գիլատամ, Գիլռէխ», և այն։ Եւ  
այն գիլութեան շնորհիւ էր, որ նա իւր տան շուր-  
ջը գտնուող խեղճ ու նուազ գիւղացիներին ցուլի նման  
հարուածելով, վաղուց դուրս էր քշել իրենց խրճիթ-  
ներից և տեղները զաւթել, իւր համար ընդարձա-  
կել ու աղատ ոտները մեկնել։ Շշմարիտ է, գիւղի  
մէջ միւս վաշխառուներն էլ նրա չափ տեղ ունէին,  
սակայն Պետօվի տունն ու տեղը գիւղի աչքն էր։  
Յանկով շրջապատուած դատարանն իւր մէջքին առ-  
նող բարձրավանդակը նման էր մի զանգակատան, որ-  
տեղից, սակայն, մարդուս կոշտ ու խոպանացած և  
կեանքի դառնութեամբ թունաւսրուած սիրտը՝ յու-  
սով ու քաղցրութեամբ լցնող զանգակի զողանջման,  
հնչման փոխարէն, ամէն Աստուծոյ (կիրակի) օր լըս-  
ւում էին՝ կրուի, հայկոյանքի, տուր ու գմփոցի,  
անէծք ու լացի և աղեխառն հառաչանքի ձայներ։  
Այստեղ, այն սպանդանոցի պատերի տակ, միշտ տես-  
նում էիր՝ որբիկներից մէկին զրկած, միւսի թաթը  
խեղճ խեղճ բռնած և վերջիններին հաւի սվավան  
ձագերի նման ետևիցն արած, ոտքերը բորբիկ, չլերը

բաց, անհանդերձ, արտասուքն աչքերին գիւղի աշ-  
րուն իւր սև սև օրերը լալիս և կամ աշնան տեր-  
և պէս դեղնած, արիւնք ցամաքած ու կմաղք դար-  
ձած գեղջուկին, որ կարծես մահուան անկողնից  
հաղիւ վերկացածի, կամ լծան տակ ջարդուած նիշար  
լծկանի նման ոտքերն իրար զցելով, գալիս, անում  
էր իւղ աղիողորմ գանդատը: Նրա կողքին աւելի  
սրտաշարժ կերպարանքով կտեսնէիր կանգնած մի  
ուրիշին, որը ձեռը ծոցին, աչքերը զետինը ձգած,  
լուռ, արտասուքով էր միայն բացատրում իւր հո-  
ղին մաշող գարդն ու ցաւը և՝ արցունքներն անդա-  
պար սահեցներով այտերի վրալից, մորմոքուում էր ան-  
վերջ: Այստեղ, այն հրէշաւոր սրահի պատերի տակ  
մի այլ տեսարան ևս էր բացուում դիտողի սուած:  
Հստ երևոյթին, բանտարկելու էին բերել նա և՝ բա-  
զուկները ետևներում կապած միքանի բիրդ հսկայ,  
վայրենաբարոյ հովիւներ նախրչիներ, խոզարածներ և  
այլն, որոնցից առաջինները կոխ տալով մղկող այ-  
րիներից մէկի այդու ցանկապատը, կոտրտել, փշել  
էին, նրա, տակը մասներով փորած և ուսով ջրած»  
խնձորենին, քաղել, տարել էին և երբ նկատել էր  
անզօր այրին՝ ծւացել, ճացել ու անփել ետևներից,  
ինտ էին դարձել և՝ ծեծել, և՝ ունեցած ձորձերը  
պատուուել, և՝ մագերը պոկ տուել ու գնացել...

Երկրորդն ու երրորդը հօտի միջից յափշտակել  
էին միւս այրու սակաւաթիւ գառները և յուսներն

իրենց ազգեցիկ և «խորովածափալ» ստացող աղա-  
ների պաշտպանութեան վրայ դրած մորթոտել, կե-  
րել էին սառնորակ աղբեկրների ակունքների մօտ ու  
վզերը հաստացըել ցուլի վզի պէս: Մնացածներից  
չորրորդն ուժով աղջիկ էր փախցըել, հինգ և վեց-  
երրորդը՝ շնութիւն արել և այն, և՛, այս ամենին  
պիտի դատէր Ղոմիար Պետօն իւր մինդալաւոր ըն-  
կերպակցների հետ, որոնք կաշառքի համար բայ-  
դուշի ձագերի նման Բէրանները միշտ բաց կալած էին  
պահում:

Գատարան կոչուած բաւական ընդարձակ սե-  
նեակի երկարութեամբ իրար զուգահեռաբար գրուած  
էր երկու թախտ, որոնց մէջ տեղը զետեղուած  
էր նաև մի քառանկիւնի սեղան և այդ սեղանին,  
փափախները մի կողմ գրած, հպարտութեամբ շրջա-  
պատել էին Պետոյի «կերընկեր մինդալաւորները»:  
Վերևում ինքը Պետօն էր նստել իբրև նախագահ,  
կողքին իւր զրագիր բեղալթին, որը նստածներից  
աւելի ուստան էր երևում:

Վերջինս թուղթը, թանաքը և վրձուելի գործերն  
առաջը հաւաքած, մի կողմից խորհրդաւոր կերպով թեր-  
թերը շրջում էր, միւս կողմից կրկնակի բեղերը սրում:

— Ղալամի կոթը, բնի համար չոփ տանող ազը-  
ռաւի պէս, եահա ըրխըմ, եահա բեղերը սղալըմ ա.  
Հալբաթ ճանկը զատ ա ընկել, շշնչալով նկատեցին  
պատերի տակլից:

Այս միջոցին Ղահրաման աղան տեղից վերկացաւ, նալչաւոր և կրունկները քերքերուած փռստալները ճոճուացնելով մօտեցաւ, մի բան փսփսաց տանուտէրի ականջում և սկսեց տէրողորմէն նորից քաշել:

Մեղադիեալներին անասունների պէս քշել, արել էին գոյը, որի շէմքի առաջ երկու կողմից իբրև պահապան դադանակները ձեռներին կանգնած էին զզիր կամ չաւուշ կոչւածները:

Փատարանի շէմքի երկու կողմը, պատատակերը և թախտերի ազատ տեղերը բռնած գանգատաւոր, վկայ և հանգիստես ամբոխն սպասում էր ժողովի բայուելուն—դատի սկսուելուն, իսկ դատաւորները սագերի նման քիթ քթի դրած՝ դեռ քչփչում էին ծածուկ:

Սաքնի տղինն էր առաջին վճռելի գործը, ուղովհետև Ղահրաման աղան քաղաքավարութիւն էր բանեցրել ու պատուաւոր կերպով զզից սկսած մինչև Պետօն կաշառել. այդ պատճառով նրա գործն էին առաջ ձգել, իսկ աղքատների գանգատին ըստ սովորութեան երեւ դեռ ուշ պիտի հերթ հասնէր:

— Բռուցներդ: Սնաւ, — վերջապէս քչփչոցին վերջ տալով, ձեռքը մտրակի կողմը մեկնելով, հրամայից Պետօն:

— Չեզ չի ասը՞մ, էլ, ձէններդ, — ճիպոտը տըմամբացնելով, գոմի գուից գէպի դատարանի շէմքը նետուելով, սաստեց նաև աղա զզիրը:

— Խօսողն ըշտրավի տակ կընդնի, — կրկնեց տանուտէրը:

Լուլթիւնը տիրեց: Թատաւորները փքուած նստեցին և բեղու զբագիրն սկսեց շեշտելով կարդալ Ղահրաման աղի բողոքը:

«Կ. գեղջ հասարակութեան պ. տանուտէր պարեծնունդ և արդար դատաւորներին՝ Ղահրաման աղա նովլուղովից

Գանգատ.

Սրանով պատիւ ունիմ խնդրւել արդար դատաւորներիցդ, որ Սաքնի տղայ Սահակից իմ հալալ քրտինք տասը մանէթը, որն որ նա վեր ա կաւել բարաթով, իւր շտրափով շահ ու շալակովն առնէք ու տաք ինձ: Եւ էլ, զակոնի զօրութիւնով իրան արժանի պատիճը տաք՝ ինձ հուջաթ ու անպատիւ անելու և էլ ուշունց տալու համար: Սրա հետ մատուցանը եմ ձեր պարեծնադութեանը նրա տուած բարաթը և էլ անպատութեան վկայ եմ բերում Անախասի տղայ Սաքուին, Մինասանց Թանինին և Աթինի տղայ Ուռուստամին»:

1892 ամի 15-ին յուլիսի.

— Ճատ լաւ, բարաթն էլ կարդա, ասաց սուդիայ Պիտրին:

«1891 ամի 15-ին յունիսի, բարախտ  
տաս մանէթի.

«Ես ՚ի ներքոյ սորին ըստորակիրեալ Սաքի-  
նանց Սաքնի տղալ Սահակս Ղահրաման աղա Նով-  
րուզովից մի տարէն ժամանակի վեր առի և պարտեմ,  
տասը մանէթ նաղդ արծաթ զրամ, ամսական իրեք  
արասի շահով, և էրկու օրէն հնձով: Փամանակը լը-  
րանալուն պէս եթէ հակառակէմ, չտամ և դիւանի  
դցեմ, օրէնքով պատճեմ և մէկին էրկու էլ առանց  
այլ և այլութեան ըշտրափ տամ:

Սահակ Սաքինով

Վկայ եմ Կարապետ Թաթոսով/  
Վկայ եմ Ռւհան Մարանով,  
Վկայ եմ Ղուկաս Քաջալով:»

—Է՛հ շատ բարի, իմացանք: <sup>Առհանչ</sup> Սաք-  
նովին կանչեցէք, թող առաջ գայ, —բարաթի ըն-  
թերցումից յետոյ հրամայիցին դատաւորները:

—Սահակ Սաքինով, —թղթին նախելով և ամ-  
բոխին դառնալով, կրկնեց բեղալթին:

Քարդուած փշրուած, ու առնաթաթախ Սաք-  
նի տղին գգիրները հրելով ու շտապեցնելով բերին  
մէջ տեղը կանգնեցրին:

—Ա՛րա, ա հարամձագա, էս մարդի փողերը  
խի չես տալի, խի ես չարացնըմ, որ ըուէխմուէխսդ զզըմ  
ա, —մանր աչքերը, խոռոշից դուրս նայող մկրօշի  
աչքերի նման ճպճպացնելով, հարցրեց Ղիտրին:

—ինդուր, որ տըւել եմ, —պատասխանեց նա...

—Հիշշտ, էլ, բա էս բարաթն ինչ ասըմա,  
որ ասըմ ես տըւել եմ, —թուղթը ցոյց տալով, նր-  
կատեց բէղալթին:

—Գիտըմ չեմ, <sup>Առհանչ</sup> բարաթին ես սէտ (տեղիակ)  
չեմ, —աւելացրեց Արտօնը, որի այնքան համարձակ  
պատասխանելը բաւական զարմանք էր պատճառում  
հանդիսականներին:

—Պըի, արա, տենըմ էք:

—Ջանին հասել ա, է, —կրկին լսում էր ամ-  
բոխի մեջից:

—Ի՞նչ ես ասըմ. ոնց թէ սէտ չես, հը, բա  
տակին ձեռք քաշած վկաներն ինչ կասեն, գրողն  
ինչ կասի, —կրկնեց բէղալթին:

—Հա, դբա ահցին ամեն բան կասեն, զօրթ ա:

—Զէնդ կտրի, հարամ թողխում, երբոր բա-  
րաթ կայ, վկաներն կան, դու իրաւունք չունես խօ-  
սալու, —մտրակին ձեռն ածելով, լուցրեց Պէտօն:

—Էլի սաղ կողք ունի, է. ինդըմ եմ կանչէք  
վկաներին, —վիրաւորուած հայեացքով որսին նա-  
յելով, պահանջեց Ղահրամանը և սկսեց տէրողորմէն  
ձգել շուտ-շուտ:

—Սարգիս Թաթոսով, Ռւհան Մարանով, և  
ը... Ղուկաս Քաջալով, ըստի համեցէք, —ազգա-  
նունները կարդալով, հրաւիրեց գրագիր բէղալթին  
և սկսեց երեսներին ժպտալ:

Սկսուեց հարց ու փորձը:

— Տեսէք, դրստու պէտքա խօսաք, այ, — խարդախ նայուածքով նախազգուշացքեց Պետրին:

— Հա, հրաման քեզ, դրուստ, սուտն ինչ ա, — պատասխանեցին նրանք:

— Ես, բարաթը Սաքնի տղայ Սահակն ա զրել տուել, չէ:

— Հրաման քեզ, տիրացու Թաթնին զրել տուեց: — Հու տե՛կուք ձեր աչքովը:

— Հրաման քեզ, բառը տեհած չնենք հոգին-ներիս մեղք կանենք, — վկայեցին երեքն իմիասին, որոնք իւրաքանչիւր խօսք արտասանելիս ուղիղ դատաւորների աչք ու յօնքին էին նայում՝ մոլլից դաս առած իոնարհ մոնթերի նման:

— Լաւ, իմացանք, դուք դուրս դնացէք, — հրամայեց Վիտրին, իսկ Ղաձրամանը փսխուց տանուտէրի ականջում և ապա բարձր ձախով ասաց:

— Պալոն դատաւորներ, խնդրւըմ եմ տիրացու Թաթնին էլ հարց ու փորձ անէք, որն որ էդ բարաթը հէնց հանիս ինքն իր ձեռուին ա զրել:

— Հա, արի, — ամբոխի մէջ տիրացուին որոնելով, ասաց տանուտէրը:

— Համեցէք, տիրացու, քու վկայութիւնն աւելի ա հարկաւոր. ես վաղուց զիտամ, որ դու զիւզ խօսող մարդ ես, — ժպիտը թաղցնելով, սիրտը շահեց Վիտրին և յառաջ գալուն պէս՝ առաջարկեց բարաթը:

— Առ, տիրացու, առ մի կարդայ, տես ում ձեռացագիրն ա:

— Ի՞րանն ա, ումը պաի լինի, ինքն իր ձեռացագիրը ճնանչը չի, — աւելացրեց բէղալթի զրագիրը:

Տիրացուն ժպիտն երեխին, կաղ ատվօկատի պէս մօտենալով սեղանին, ակնոցները սարքելով կոսալ քթին, առաւ թուղթը և մօտեցնելով աչքերին, քու պառաւի պէս փոքր ինչ պշազալուց յետոյ, իւր խորը զրաբարին զոռ տալով, վկայեց հպատակօրէն. «Պատիւ ունիմ խորապար վկայապանելոյ ծերդ պարեծնոդութեան զճշմարտապէսն թէ՝ զայիս բարաթս փասն զանդրագիտութեան և զինդրանացն՝ առ զային զվկայիցն զյառաջ զքան զմի զամի զըգը բեալ եմ զես զիմս զսեփական ձեռուքս և զիտեմ, որ Սահակ Սաքինովն պարտ ա...»:

— Ճատ լաւ, հէնց էզպէս ա, որ կայ. դու էլ զընա, — մեծ բատականութեամբ պատասխանեցին դատաւորները:

Այս վկայութիւնների ժամանակ Ղահրաման աղէն ինքնաբաւականութեամբ լցուած, գիշակերի յաղթական աչքերով էր նայում իւր որսին, իսկ խեղճ Սաքնի տղէն, համարձակութիւնը կոտրուած, զէրայի ճանկերից աղատուած, բայց սաստիկ կտցահար եղած ճուտի նման կուչ էր եկել, ու, ձեռքերը խաչած, վախկոտ և անհամարձակ աչքերով էր նայում այն սեղանին, որի վրայ բէղալթի գրագիրը՝ ծնօթը

ծուած, ոտը ոտովը ձգած և փքուած, փիլիսօփայինման ճզնզացնում էր իւր արիւնոտ զըլչը:

Յուսահատ Սահակի դրութիւնն ու տեսարանը հետզհետէ աւելի ևս սգալի և անտանելի էր դառնում: Դատարանը նրա համար կարծես դադաների ոռնոցով լի զիշերային անապատ էր դարձել, ուրիշեղմ աղքատն այնքան ուժապառ էր եղել, ահաւորուել, հալից ընկել, որ իւր այնքան դառն ախնուու օֆը չէր կարողանում լսելի անել: Թէպէտ դատարանը լիքն էր և շատերը խզնում, մինչև իսկ արտասւում էին թագուն, բայց նրա օգտին մի խօսք, օգնութեան մի թեթև շարժում անգամ անել չէին կարողանում, որովհետև նրանց վրայ սարսափ էին տարածել որքան վաշխառուները և զօրաւոր աղաները, նոյնքան էլ տգէտ և կաշառակեր, անարդար դատաւորները:

Բայց թւում էր, թէ ստախօսութիւնը, ակամայ սուտ վկայութիւնն ամենից աւելի խղճահարում էր և անհանգիստ անում երեք ռամիկ վկաներին, որոնք տիսուր, տրասում նստել էին դուրս և ձեռքներով ճակատները ճնշած՝ մտածում էին խորը և երեմն ընդհատելով լուռթիւնը, կամաց քչքչում. «այ տղա, էս ի՞նչ արինք, ամօթ մեղ համար. ի՞նչ ջուղաբ ենք տալու Ասծուն վերջի դասաստանի օրը,» — ասում էր մինը, իսկ միւսը պատախանում էր. «ի՞նչ անենք, դրանց հոգին հուրը մաշի, Աստօծ դիտըմչի, որ դըրանք մեղանում հոգի ու հաւատ չեն թողել...»:

Անխիղմ էին միայն Ղահրաման աղէն, Գիղինի տղէն... բէզալթի գրագիրը, Թաթին և Պէտօն ու Ղիտրին. նրանց համար այդպիսի տեսարաններն ու անգիտութիւններն այնքան սովորական էին, որքան մսագործի համար սպանդանոցն ու մորթելու անստունները: Նրանք գեռ ծիծաղում էլ էին ու հանաքներ անում այն սրտամլիկ վայրկենին, երբ հարաքաթից ընկած Սաքնի տղէն ստքի վրայ էլ կանգնել չէր կարողանում:

Սակայն, ի՞նչ կարելի էր պահանջել մանաւանդ բէզալթի գրագրներից և Թաթոսների նման անձինքներից, որոնք աւելի մեծ չարիք են դիւզացոց համար, քան թէ վաշխառուներն ու աւազակները: Այդպիսիներն են ռամիկ ժողովրդի անքուն ցեցերը. զրանք են անգրագէտ ամրոխի մէջ զրում ու կազմում ամեն տեսակի ապօրինի և կեղծ բարաթներ, սանաթներ ու համախօսականներ, և, հրէշաւոր պայմանագրեր, որոնց կամ անտեղեակ են լինում աղքատները և կամ «զրի սկն ու սիպտակը» չիմանալով, տոռրագրում ու վերջը տուժում, տուզանքների, դաւի-դառաբաների տակ ընկնելով, հեծում, հիւծում ու ծեծում և ստրուկի նման այս և այն վաշխառուի տանն ու դրանց ծառայելով, կեանքները մաշում ու իւրտակւում են անվերջ և անհետք:

Դիւզում աեղի ունեցող վայրենի կռիւները, ծեծը, գողութիւնները, բամբասանքը, մատնութիւնը և

մանաւանդ անբարոյականութիւնը տարածողը վերո-  
լիշեալ անձինքն են: Նրանց ձեռքովն են կատար-  
ում աղքատներին քայքայող ու աւերող կաշառակե-  
րութիւնները. թալանել, կողոպտել, զոմերից ապ-  
րանքը քշել, տանելլ դէղերը կրակելլ, վաղները  
կտրելլ և մարդասպանութիւններն ու սուտ վկայու-  
թիւնները: Նրանք են, որ զիւղում ոչ ցանում են ոչ  
հնձում, այլ աղքատներին կեղեքելով գիշակեր թըռ-  
չունների պէս ապրում են: Նրանք նման են պիծակ  
կամ շանաճանճ կոչուած խալթոցաւոր միջատներին,  
որոնք միշտ ուրիշի բնից ու փեթակից են մեղք տա-  
նում իրենց համար:

Այսպէս, կարկտից, երաշտից և բնութեան այլ և  
այլ պատահարներից բացի, այդ հանգամանքներն են  
պատճառը, որ, չնայելով դեղզուկների անդուլ աշ-  
խատանքներին ու չարչարմոնքներին, այնուամենայ-  
նիւ, նրանց մեծագոյն մասն աղքուտ է և մինչեւ  
կոկորդը պարտքերի մէջ խրուած: Այդպիսի, թշուառու-  
թիւններն էին մերկացրել նաև Սաքնանց Սահակին,  
որին վերակրած բարաթը նոյնպէս կեղծ էր: Գրողը  
Թաթին էր, վկաները Նովրուզեանի պարտատէրերը,  
որոնք վիզներին բարձուած ծանր-ծանր պտրուքերի  
անժամանակ պահանջուելուց, ծեծ ու քէօթակի և  
տուզանքների համար նորանոր պարտքեր անելու,  
կարճ վաշխառուի ահից Աստուծուն էլ մոռա-  
ցած, ընկերը-հարևանին էլ, եկել, ակամայ վկա-

յում էին թէ բարաթն իբենց ներկայութեամբ է  
զրուած...

Այդ վկայութիւնից անցել էր երկու ժամ: Սաք-  
նի տղէն ձեռը ծոցին, շամփուրը շարուած կմաղքի  
պէս, դեռ կանգնած էր: Բէղալթին զեռ իւր «ղա-  
լամի» ճգճղոցով նրա արդէն մաշուած սիրտը խո-  
ցոտելով, դրում, ջնջում, արտադրում էր, իսկ Պէտօն,  
Ղարբին, Աքէլն ու Մուկուէը Նովրուզովի հետ միա-  
սին խիստ մասլահաթի մէջ էին:

— Հը՞, աղա, — աչք ու յօնքով նշան անելով,  
հարցնում էր Ղիտրին:

— Անպատճառ. պակաս բան չեմ թողալ, զուք  
բաններդ տեսէք, — պատասխանում էր նա:

— Անծուխ կրակ կունենաս, գինի, ճուտ, ճիւ, զատ,  
հարցնում, կրկնում էին դատաւորները և բեկները  
սրում, իսկ Սաքնի տղէն՝ դառնագունած, արտա-  
սուքի կաթիլներն այտերին, աղերսալից հայեացքով  
շէմքին նայելով մէկ-մէկ, մըմնջում էր դղժ-  
գոհ:

— Ա՛խ, Գիքօ, Գիքօ, եարաբ մւը ես, որ ինձ  
չկասար: Ա՛խ, ընչի՞ չես իմանըմ, որ բերանս փա-  
կել՝ անլիզու հայվան են շինել, թողըմ չեն, թէ հէ  
գանգատս էլա անեմ, խալիսն իմանան, որ սիրս հո-  
վանայ ու եղոյ տունս քանդեն: Ա՛խ, ա ա ա-ախ,  
խորը հառաջանքով ասում էր խեղճն ու կարծես  
անյոյս մտքերի ծովն ըսկնում անվերջ:

— Հը՞. ինչ ա, դէլն ես տալիս, —կողքին հրելով և դատաւորներին նախելով, նկատեց զգիրը:

— Ոնչիչ, երբոր խրատուի, էլ իսկի դէլը չի տալ, վրաբերեց Վիտրին և դառնալով զրադրին, շտապեցրեց, —պրծար ոչ, այ, ինչ կամաց էս գրըմ, պըրծիր, թէղ արա, դիտես ոչ, որ կործ շատ ունենք, մենակ էդ խու. չի...

Գրագիրը, բէղալթին սրած, գրչի ճղճղոցն արագացնելով, մի քանի լոսկէից յետոյ գրիչն ականջի յետեր գրեց և բոլոր հանդիսականների առաջ կարդաց հեաւեալ սովորական արձանադրութիւնն ու փճիռը:

### Արծանակիրութիւն..

Մենք ի ներքոյ ստորակիրեալ Կ. գեղի շինական դատաւորներս, նախակայութեամբ մեր օբքեստի տանուտէրի, լսեցինք պարոն Ղահրաման աղա Նովրաուզովի արդար զանգատր՝ վերապերեալ Սահակ Սաքինովի տասը մանէթի բարաթիւն: — Ղահրաման աղա Նովրուզովը զանգատըմ ա, թէ Սահակ նաքինովը իրանից մի տարէն ժամանակի վերցրել ա իրան շահովը տասը մանէթ արծաթ փող, և, հըմինչ միան չի տալի, այլէ՝ եա փախչըմ տապ ա անրմ, եա թէ չէ, ուշունց տալով ուրանըմ ա իրան սեպական պարտքը: Այս զանգատի հետ միասի, աղէն ցոյից տըսց դադաւորներիս այս առցանակիրութեան հետ կարւած բարաթը:

« Կանչեցինք Սահակ Սաքինովին, բարաթը կիրող տիրացու Թաթնին և վկաչքեր՝ Թաթոսովին. Մարանովին և Քաջալովին: Սահակ Սաքինովը ուրացաւ, իսրկ, կիրոյն ու վկաչքները հաստատեցին, որ նա սուտ ա խօսըմ, ուրանըմ ա: »

Այս հիման վրայ, և սուրբ օրէնքի հըմածայն վճռեցնք: —

### Վ ճ ի ու

Որովհետով Սահակ Սաքինովը սուրբ օրէնքին հակառակ ա վարել, ի լրանալ ժըմանակին չի տըւել, դրա համար Ղահրաման աղին պէտքա վճարի տասը մանէթն իրան շահովը, որ կանի տասնըմք մանէթ: Դարձիալ, մէկին էրկու ջարմէն քսան մանէթ, և էլ՝ աղին ուշունց տալու համար շինական դատարանի օգտին հինդ մանէթ չարմա, և էլ, դարձիալ, էրկու օրէն չարած հնձի փոխանակ օրական մի մի մանէթ, որնըր աղէն նըրա պատճառի ուրիշ մշակի ա տըւել, և էլ դարձիալ, չորս օր տուն գցել (բանտարկել), որ չիմ միասի կանի՛ չորս թուման ու իրեք մանէթ և չորս օր: Պայից, որովհետով Սահակ Սաքինովը նաղդ փող չունի, այս պատճառի վճռըմ ենք, որ Ղահրաման աղէն նըրա էրկու եղներից որնըր հաւանի, քսան մանէթի դոլա վեկալնի, իսրկ՝ մնացած մի թուման և ութը մանէթին էլ՝ երեք օրավար հողերիցը, նմանապէս որը հաւանի, զալոկ վեկալնի, ու, հինդ տարի իրեսը վեկալներոց եղը, եթէ Սահակը կարենայ տասնութ մանէթն իրան շահ ու շալակովը տայ, հողը եղ ստանայ»:

Այս դատավճիռը կարդալուց յետոյ, Սահակը իրան կորցրեց, շփոթուեց ու մնաց ապշած. բայց յանկարծ ուշքի ու սրտի գալով, աղաղակեց:

— Ես իմ գանգատը հըլա արել չեմ, թողեցիք ոչ թէ անեմ, թողէք անեմ, ետոյ ինչ ուղըմ էք, դուք էլ էն արէք...

— Անուս:

— Թողէք անեմ, խնդրում եմ...

— Լել չի. ասելու, խօսալու իրաւունք չունես, քու տեղը՝ բարաթն ու վկաներն ասել, պլծել են:

— Սիրտս կրակւել, հոգիս վառւել ա. թողէք, թէ Աստօծ կոհրէք:

— Լել չի, — ձեռները բերանին գնելով, կրկնում էլն գզիրները:

— Քեօխվա, — աղաչում էր Սահակը:

— Ամմենևին, ինչ որ գրւել ա, փոխւիլ չի, պէտքա տաս, ջանդ դուա դայ, որ խրատես, քու թայ ու թիւշը ճնանչես, — Պլղատոսի նման վճռապէս պատասխանեց Պէտոն:

Սահակն տցնուհետեւ, չնայելով իւր ծեծուած մարմնի հեռող ուռուցքներին, հանգած ու հատած ջանին, չնայելով դատաւորների սաստելուն և գզիրների վայրենաբար բամֆելուն ու դէս, դէս ձգելուն, այնուամենայնիւ, գայերի մէջ ընկած կենդանու նման սկսեց բղդալ, բառանչել ու բողոքել Աստուծուն:

— Աստօծ, քեասիբի Աստօծ, քե՞զ եմ կանչըմ, որտեղ ես. որ սարը, որ քոյն ա առաջդ փակել իմ բաղդիցը, որ էս անիրաւ, էս չհուդի անօրէն դատաստանը տենըմ չես: Ասենք թէ սրանք են ուրանըմ կեաղանի ահլից, դու խու ահ չունես, դու խու վկայ ես, որ տասը տարուց առաջ պարտք արած տասը մանէթին իրեք հարիր ու քառասուն մանէթի (340 ր.) մենակ շահ են առել ինձանից. դու խու վկայ ես, որ տունս քանդող, էրեխանցս բերնի թիքէն խլող Պահրաման աղին ես բարաթ չեմ տուել, պարտքս ու բորջս հէրուանի եմ տըւել, վերջացրել: Ա՛խ. բա խի չես էդ բացը տեղիցը եա մի քար եա մի կարկուտ գցըմ գլխին. խի ես ատամնին տունոտ գիլի ատամների պէս սրել ու ջաններիս արել, միսներս քը քրիլ տալի: Էս լինչ ա իմ հալլ, տուր էլի գլխներին, էլ ընչին համար են շանթերդ ու կեծակնիդ, որ ինձ ազատութին չկայ.., — կրակուած սրտով բողոքում էր Սահակը, բայց ի զուր, լսող չկար, « Աստուած բարձր էր, թագաւորը հեռու»:

Սահակին մտրակի ու ճիպոտների շրբկոցների տակ տարան, նորից բատարկեցին հոտած զոմի մէջ. իսկ նրա հողն ու սիրելի եղը տուին հզօրին.., որի սարսափից այնքան խիստ երաղահար էին լինում նաև Միքէլն ու Մէջում ապին:

Չատ և շարունակ լծուող ու ծեծուող լծկանը երբ յոգնում է և զիտէ, որ նորից պիտի լծուի, տիրոջ բարբառոսութիւնից ազատուելու մտքով հանդից հեռանում, մտնում է մոլուտների ու ժախուուտների մէջ՝ մի տեղ նատում, պոչն անշարժ, զլուխը տափին դրած՝ սուս ու փուս թագ է կենում։ Բայց վայը եւ կել, տարել է խեղճ կենդանուն, երբ բիրդ տէրը դտնում է նրան. էլ փայտ, էլ ճիպոտ ու ձող չի մնում, ճանկն ընկած ամեն իր փշտում է վրան և, հայ-հոյելով ու ծեծելով, տանում, նորից լծան տակն է քաշում ու կորցրած ժամերի փխսարէնն այնքան է քշում, որ «անլեզու հայլանը» շատ անդամ կամ ոտը դէմ է տալիս ճիպուների հարուածների տակ օձի պէս խորխահան լինում, կամ ծանրութեան տակ վայը է ընկնելով, սկսում է աղիողորմ զուգուալ և լամ ուժապառ ճաքում ու տրաքում, ազատում նրանից։

Ալշտ այդ լծկանի օրումն էր նաև Մէջլում ապին։ Նա, լծնափախ տուող եղան նման, շատ անդամ երեկոյեան ուշ տուն դտունալով, իսկ առաւոտեան վաղ, ժամանակից էլ շատ վաղ զարթնելով, պարտքատիրոջ երեսից անդադար փախուստ էր տախ, որպէս զի ժամանակ գտնի, մէջէմէջ էլ իւր խղճուկ գործերից գոնէ մինն ու մինն ուղղի։

Բայց աւաղ։ «Խեղճն ահը քաշեց, մահը տեսկաւ։» Զափարի տակից տուն դառնալով, բահն ու թին առաւ ու մինչև կէս գիշերն սկսեց իւր կալը տաշել, աղբը քերել ու մաքրել, ուստի խիստ ուշ քնեց նա։ Առաւոտեան յանկարծ արթնանալով տեսաւ, որ լոյսը ծագել է, իսկ ինքը քնով է ընկել։

Վաշ, քու զեարդանդ կոտրի, Սարգիւլ, ասենք ես ջարդուած էի, քնով հընցայ, բա դու ինչ բանի էիր, որ վեր չկացըրի։ Վաշ. էն անիրաւը ըրաւուրդ պտի անիլ, հա, — գուշակեց նա և, ահը սրտումը, մահը մտքումը, հարաքեաթ արաւ, տրեխները մի կերպ ոտներն առաւ, պաշարը — ճաթի երկու չոր հաց, Սարգիւլի շնորհիւ գուներից մուրած մի ճուիկ քացախ և մի քանի կէուիք սխտոր գույնին ածեց և, հէնց ուսը ձգած, մանդաղն առլով ուղում էր վախվխելով գուխլը սողխաղքից հանել ու տպտապ անելով դէպի իւր գարու արտը ուղղուել, յանկարծ թմբի զլխից մի գոռ ձախն սարսափեցնելով, յետ դարձրեց նրան։

Մէջլում ապին, կամաց, կրիայի նման, զլուխը ներս տարաւ կրկին և կարկտից հարուած ստացած ծերունու նման, մէջքը բռնած խիստ նեղսրտութեամբ և լքացած բացականչեց։

— Օ՛վ—վէ, քու ճէնն Աստօծ կտրի, հա. մէջքը խի կոտրեցիր։ Օ՛վ—վէ. լ'նչ թէ եազու ըլած դարիս կծղեց, կորաւ, փչացաւ։ Վաշ...

Թմբի գլխի բարուշը Ղահրաման աղէն էր դարձեալ: Նա, հպարտ, հպարտ, ձեռները ետևին էր դրել և, անզութի սկզբարանքով, առուիցը ջուր խմող Գառին նայող ու մեղաղրող զայլի պէս նայում էր դէպի խրճիթը և կանչում դաժան դաժան: — Սարգիւլ, այ աղձի, Սարգիւլ...

Սարգիւլը, որ գորակն ուսին ջրից էր գալիս, կանդնեց և ձեռով նշան տուեց:

— Աղձի Մէջլըն ըրկկունին իմացել ա, որ էս շաբաթ պարտքի շահրմը մեղ համար պտի հնձի:

Զխօսկան Սարգիւլը ձեռքի տատանումով հասկացրեց, թէ չգիտեմ:

— Աղձի ինչ ես չանչիդ անըմ, գնա, ասա աղէն ասըմ ա ոչ մի տեղով զրադ չլսես, մեղ համար պէտք ա հնձես, — հրամայեց նա:

— Միսակ ջան, Միսակ, արի էն որդամեռին ասա. լաւ, կանեմ, ամա զիտամ ոչ տանն ա հլա, թէ ոչ:

Խեղճ կինը շատ լաւ զիտէր, որ իւր ամուսինը երկիւղից թագ է կացել խրճում, բայց «զիտամ ոչ տանն ա, թէ ոչ»-ով ուզում էր մի կերպ ժամանակ վաստակել, որպէս զի նա կարողանայ սողալ՝ մի հընարով այդ օրն իրենց բանին գնալ: Բայց պատանին երբ Սարգիւլի խօսքը նրա չխօսկանութեան պատճառով հաղորդեց վաշխառուին, նա այնպէս հեր-

սոտեց, որ ուզում էր թէ թմբի գլխի բոլոր քարերը կարկտի պէս գլխներին թափի:

— Աղճի, ա լաչառ. ա անդգամ, բա ո՞ր չկանամին ա քեզանով, որ զիլանզով (թարգմանով) էլ ասըմ ես թէ՝ «զիտամ ոչ տանն ա, թէ, ոչ». գընա, այսա դուս զայ, թէ չէ, կը գամ էդ զորտանը իւն կոկալնիդ էլ գլխներիդ փուլ կածեմ, — սպառնաց նա:

Խեղճ կինը երկիւղից գէրա տեսած հաւի պէս, թևերն իրան քաշած մի կերպ տուն մտաւ անիծելով:

— Վայ քու մարութն Աստօծ կտրի, հա. Էս խեղճ ու նաչարը սաղ շաբաթը որ քեզ համար զայ, բա մերը, — ասաց նա և կուժն ուսից իջեցնելուց ինտոյ, նայելով շուարած մարդուն, յայտնեց նրան. «ինչ ես մէջքդ բռնել, մնացել կաղնած. նրա գլուխը թաղեմ հրէ եկել, էն վիրեւը զբողի պէս կաղնել, հեռանըմ չի, հրէ...»

— Բա ինչ անեմ, ա կնիկ, ճար չկայ, գարուս պատառը կծղը՝ ա ախր: Հը՝ ասա է. թորենը, մըտնեմ, թէ ոնց անեմ:

— Վայ թէ...

— Եդ գժար ա, հա. որ գտնի, ինձ էլ Սաքնի աղի օրը կցցի, — երկիւղով պատասխանեց Մէջլումը:

— Բա ո՞նց անեմ, զիուսս ո՞ր քարին, ո՞ր քոլին տամ, — շուրած կրկում էր նա, իսկ վաշխառուն,

ոտները գետինը թակելով, այնպէս էր թնդում, որ խրճթի օճօրքը շարժում էր զլխներին:

—Մէջլըմ, Մէջլըմ, այ քէօփալօղի, այ հայվան, այ իթօղի, դուք արի, թէ չէ դալիս եմ կոկալդ քարուքանդ անեմ զլխիդ: Սարգիւլ, Սարգիւլ, այ դանջղ, Սարգիւլ, —շարունակում էր նա և մէկին կամ միւսին կանչելով, լպիրշ և ընտրովի հայհոյանքներով, դագանակն առած, կամաց-կամաց իջնում դէպի խրճիթը:

—Այ մարդ, նրա որդիքը թաղեմ, հրէ կեազսն դառած դալիս ա, դուս գնա, ասա դալիս եմ, ասա շորերս կենըմ էի, եա մի ուրիշ մըհանայ արա, եկաւ, դուս գնա, —դողդողալով խորհուրդ էր տալիս դափուանի դոյն ստացած կինը:

—Հա, վախս մարդ ա, Սարգիւլ, շատ լաւ ես ասըմ, էլ տապ անիլու հընար չկայ, դուս գնամ, ասեմ, էն դահրումար հունձը տամ, մնայ զլխներիս եազու դառած թաղարուկէս զարին, ընէլ՝ բողազներիցս եղ կըքաշենք, բալքի զլխներիցս ըռադ անենք, պըճնենք էղ հոդին հուրը մաշածիցը...

Կնոջ խորհրդին անսալով, Մէջլում ապին սըրտնեղութիւնից արդէն պատի տակ շպրտած դուդին ու մանգաղը կրկին վեր առաւ և խրճթից դուրս դալով, շտապեց դէպի վաշխառուն:

—Արա, տո հարամթոխում, տո ախմախ հէյվարա, որ կանչըմ եմ խի չես դալի, տենըմ ես դագա-

նակը. հու չես ուզըմ Սաքնի տղի պէս քեզ էլ գոմն անիլ տամ...

—Աստօծ ոչ անի, մղայ ջան, ես քու խօսքը ոնց տափը կը գցեմ, որ դու ինձանից նեղանաս, տըկ-լոր էի, լանթերս չուելն իրար անիլ տուի, ուշացայ մքիչ... Ի՞նչ ես հրամարմ, —ասաց Մէջլում ապին:

—Չոռն ու քացախը պնչիդ եմ ուզըմ, պէտք աէս որհաթիս ջաննամուես մեր Կէռորին, —հրամայեց նա:

—Բաշ ուստայ, աղայ ջան. իմ պարտքն ա, բա դրա համար էլ խի ես չարանըմ...

Մէջլումն, իւր լեզուի և ունեցած խորամանկութեան շնորհիւ, ազատուելով դագանակի հարուածներից, դուդին ուսը, մանդաղը, կուռը զցած, իւր ութը տարեկան երեխան էլ ետևիցը ձգած, մթնած սրտով, ամբողջապէս թախիծ դարձած, ճանապարհ ընկաւ դէպի Կէռորին: Բայց վայ այն գնալուն, որ նա գնում էր, քայիերի մէջ ամենւին աշխոյի չկար, և սիրտը սիրեր գնացողի սիրան էր դարձել:

—Ա՛խ, անիծուի օսալ բաղդը, մի տուն լիքը քիւփաթատէր մարդն էլ՝ էսօրուայ օրն իրանը կը-թողայ ու ուրիշին հունձ կինայ, — 22նչում էր նա: Եւ, մինչդեռ նա այս թախիծով մորմոքւում էր մըտքի ծովն ընկած, բայցուշի պէս թմբի գլուխը բարձրացած նորից խառնեց նրա սիրտը:

—Մէջլըմ, Մէջլըմ... ա հայվանի, տղայ, ոտ-

ներդ կոտրածուել են, խիչ չես, լեզով փոխըմ, խիչ չես լեզով փոխըմ...—կանչում էր նա:

—Ախ, ա որդամեռ, որ գհէ քոլի արջի պէտքագոռ ես տալի, մի էս թիսպած սրտիս էլ մտիկ արա, է,—կանդ առնելով, նորից մորմոքուեց նա և նորից շարունակեց:

—Ո՞վ-վէ, խեղճ Մէջլըմ, էս օր էլ առըիշի համար գնըմ, հա: Խեղճն էրկու ծլաք զարի ունի, թողըմ չեն, թէ հէ ընէլ ա հնձի, որ եա խարջին անի, եա պարտքին:

—Է՛հ, ինչ անի նաշարը. աղքատի հալն էդ ա, էլի, էնքան պտի չարչարեն, որ հոգին դուս դայ, պրծնի, —աջ ու ձախ կողմից նկատում էին Մէջլումի հեծեծանքն ու նովրուզովի գոռ-գոռ հայհայնքները, բայց ինչ օգուտ:

Մէջլումը Կէռօբին հասաւ լալով ու հառաչելով, բայց չիմացաւ, թէ այնքան տարածութիւնն ու ընդարձակ ցաքուտներն ինչպէս անցկացաւ: «Վահ, մգեար էս կրակ ընկնիլուն եմ համել», —արտի մօտ կանդ առնելով, զարմացմամբ հարց տուեց ինքն իրեն և ապա սրտակուուր հայեացքով սկսեց նայել արտին:

—Տղերք, դէնը մաիկ արէք, հրէ, հրէ, խեղճ, գլխիցը ձեռը վեկալած Մէջլըմն եկել զահրաման աղի արտի զրադին կաղնել ա, սիրտ չի անըմ, թէ նի-

մտնի, —ընկերներին մատնացոց անելով, նկատեց մի հնձող:

—Ընտէր մնայ նրա պէս արտը. արտ ա, որ սիրտ անի. ընդուր հնձող մշակը պէտք ա էրկաթայ հալաւ կ'ենայ ու ետոյ մէջը մտնիր. չիմ, տեղն ու տեղը կառն ու աթղալիթարան ա:

—Համ. օհ, զահրումար ըլի էդ աթղալիթարանը, դա շատ եաման փուշ ա, շատ, մարդի կ'եցն էլ շոր ու շիրթ չի թողըմ, չիմ պոկըմ, տանըմ, քրքրըմ, ու ջանն արնլեկի ա անըմ...

—Տօ ուր ես երկարացնըմ. կարճ ասա էն ա կրակ տալու ա, էլի:

—Ամա ինչ կրակ տրւող ես գտել, է. միւհտամշակը շատ. Ղահրաման աղի շատ վէջն ա, որ արտը փուշ ա. իրան ջանը հու չեն քրքրիլու փրշերը..., —գառը նկատողութիւններով շարունակում էին հարևան հնձողներն իրենց արտերում, իսկ Մէջլումն արցունքները սրբելով, հառաչում էր վաշխառուի արտումը:

Հունձն ինքն ըստ ինքեան մի դժոխք, մի տանջանք և մի զաժանելի աշխատանք է, սակայն նա թունաւոր և մահացու է խեղճ մշակի համար, երբ կարկտահար, ընկած, կառն ու կօծօծներով և ուրիշ հազար ու մի տեսակ տատանկներով լի ու շաղախուած հունձ է: Այդպէս էր նաև նովրուզովի Կէռօբին. կարծես թէ նեռն իջել, մէջը նստել

էր, կարծես թէ անապատի օձերով լցուել էր Մէջ-լումի համար, որ այնպէս սարսափած մնացել էր պաշարուած:

—Ո՞ւհ, կրակ ընկնի ոա. էս ի՞նչ դժբահունձ ա-անտէր փշերը թամամ լափիլ գեն ջանս: Հըմ, էն որդամենոն էնդուր էր ետևիցս հարայ տալի, թէ՝ թամիւղ հնձի, է: Թամիւղ հնձիլու համար էս խու տասն օր պէտք ա ըստեղ նստեմ. բա իմը: Ա՛խ, էրնակ մենակ ինձ համար ապրելիս ըլնեմ, էրնակ էրեխանց գարդը զնի, որ, հրէս տազարած դնամ հա գետն ընկնեմ,—նախ արտին, ապա հեռւում վշշան Աղտևին նայելով, շշնջաց նա և վճռեց իւը խաչը կիւել:

—Դրսել եմ ապրիլու համար, մայրըմ եմ տանջ վիլու համար, պէտք ա տանջւեմ՝ ազատւիլու հա-մար,—ասաց մշակը և «առջակապը» վիզը ձգելով, մանգաղն առաւ, փշոտ արտը մտաւ և սկսեց խըշ-տացնել սովից նեղուած եղան պէս:

Զ

Ընտանեկան դառը հոգսերն այնքան էին ծան-րացել Մէջլումի սրտին, որ մի բոպէ անգամ չէր ուզում մտածել, թէ իւր եղած ուժն էլ կսպառուի և առողջութիւնը յանկարծ կքայքայուի: Նա աչքի տակն էր առել երեք հարիւր խուրձը տուող արտը երեք օրում հնձել, վերջացնել: Այդ միևնույն էր, թէ

մի բեռնակիր, որ կարող է կրել իննը փութ, մենք նրան բեռնենք քսան և աւելի:

Մէջլումն արդէն հնձում էր, իսկ երեխան կէմն էր պոկում խրձները կապելու համար: Բայց գեռ մի ժամ չանցած, Ղահրամպն աղէն ձին հրեղէն դարձ-րած՝ եկաւ, իջաւ արտի մօտ և, առանց ողջաւնի, յօնքերը տօթած, մտաւ հնձած տեղը և ասեղ կորց-րածի նման ծղնօտների մէջ ման գալով, մի քանի վտիտ և մկնհատ հասկեր վերցրեց, ապա՝ թունալից դէմքն այլայելով, թքոտաց ու զայրանալով տա-րաւ Մէջլումի աչքին դէմ արաւ և գուաց:

—Տօ. էս ի՞նչ ա, էս խի ես թափել ու կրխ տւել, անցկացել, էլ ի՞նչ ես հնձել ինձ համար: Տօ հա-րամձագա, ես քեզ վէջ եմ տըւել, որ սհէ հարա-մութին ես անըմ. ես քեզ նազդ փող եմ տըւել, փող: Թէ գուս ըլի, գուս. քու հնձածն ինձ պէտքը չի, կորի, գնա, փողս ընը, որ ես մի հալալ մշակ բռնեմ, կորի, ըսադ ըլի պլիսիցս...

—Ա'զա, Ասծու սէրը, աղա, մեղք եմ, թող հնձեմ, պարտքս տամ, —անօրէնի հողն ընկած եսի-րի նման Մէջլումն սկսեց պաղատել, իսկ երեխան առուահ եղած, մնացել էր կանգնած:

—Կորի, —շարունակում էր վաշխառուն:

—Ա'զա ջան, էրեխեքս սոված են, գարուս ծը-լաքը կկծղի, կըկորչի, թող, թէ որդկերանցդ արեւը կսիրես, աղա:

— Զէ, գնա փողս, կարմիր թիւմանս, որտեղից որ ըլի, ճարիք, բեր, տուր, թէ չէ, էգուց Սաքնի տղի հընկերն ես դառնալու:

—Աղա ջան, թող, ախր իրեք տարի ա, որ քեզ մի թիւմանի խիր եմ դառել, ախր իրեք թումանին իրեք թիւման էլ շահ եմ տըւել, բա դու ինձ մեղք չես դալի՞:

—Դու ինչ մեղք դալու մարդ ես, տօ հարամադադա, որ արտս դասիդ կոխ ես տալի:

—Աղա, Աստօծ վկայ, կրխ չեմ տըւել, էդ թափած հասկերը մկան, մորեխի կտրած են, ես չեմ շադ տըւել:

— Զէ, սուտ ես խօսրմ, կորի, կորի ջհաննամփ,—աւելի հերսոտուելով նա, խեղճի մանգաղը ձեռուցը խլեց, դէնը շպրտեց և վկին տալով, դուրս արաւ արտից ու գնաց, որ ձին հեծնի:

Մէջլումը ձեռները ծոցը գրեց և խեղճացած հեռացաւ փոքր ինչ, մէջքը մի քարի դէմ արաւ ու աչքերը երկինք բարձրացնելով, մրմնջաց դառնապէս:

—Ո՛վ Աստօւած, եանի սրանից դէնն էլ դառն օր կայ: Ա՛խ... եարաբ մեղքս ինչ ա, որ սհենց ըլքարը ես. թէ ուղը ես հոգիս առնես, որ պրծնեմ էս փուչ աշխարից, հարա էս մեղք ու կրակնին ինչի տըւիր, —երեխալին ցոյց տալով, շարունակում էր նա, իսկ որբանման տղան, կէման ձեղը մի ձե-

ուն, միւս ձիուով հօր փեշը բունած, անմեղութեամբ նայում էր նրա աչքերին:

Կովրուզովը ձին հեծաւ:

—Աղա, այ օխնած, բա դու տենըմ չես իմ հալլը, տենըմ չես արնալուկի լաշը՞ս, թող էլի հունձս տամ. էս դժար մաջալին ես թիւմանդ որտեղից ճարեմ, —կրկին դառնալով անգութին, աղաչեց Մէջլումը և խիստ հեկեկանքներով արտասուքը խառնելով քրտնքին, առնագոյն զլուկներ սահեցրեց չորացած այտերի վրալից: Երեխան էլ սկսեց լաց լինել...

—Ա, Մէջլում, խի ես լաց ըլնըմ, էրեխայ խուչես. աղա մարդ ա, չարացել ա, դուս ա անըմ, հրէս չարութիւնը կանցնի, էլի կհնձես ինչ դի ասիլ, որ թողայ ոչ. մեր աղէն չի, —հարեւան արտից օգնութեան դալով, քաջալերեց մի հնձւոր և դառնալով արդէն ձի հեծած վաշխառուին, մօտենալով նրան, խնդրեց սրտագին:

—Աղա, մեղք ա, թող հնձի. ես վկայ կլնեմ, եթէ իրիկունը եղ գաս ու տեսնես, որ էլի հասկ ա թողել, էրկու օր էլ աւել հնձի թող:

— Զէ, լիլ չի, դա ինձ շատ ա չարացրել, առաւօտն էլ եղեկոցը կանչըմ էի, լուխիս անկաճ չէր դնըմ, մթամ թէ լրմ չէր, թող գնայ խրատւի:

—Միւննաթ եմ անըմ, աղա ջան, արի դու էս մի անգամը միւննաթս տակիր մի դցիլ, թող հնձի.

մըթամ թէ մի մատաղ ես արել, մեղք ա, — խընդրում էր նա:

— Ասր շատ ա չարացրել ինձ, է, շատ:

— Համբերութինը կեանք ա, աղա ջան, ոնչը, էս մըհետն էլ համբերի, գիտանք, որ նա մեղաւոր ա...

— Լաւ, — վերջապէս կոտրուեց աղէն և դառնալով իւր զոհին սաստիկ պատուիրեց:

— Տէս, սրա խաթեր քեզ թողմ եմ, որ հնձես, միան, շատ թամիւզ. խրձներն էլ պէտք ա պինդ կապես, թէ չէ, Պէտովի աղաքին ուղտի պէս կըճկուացնեմ, ու եղոյ կառնեմ թիւմանս, — սպառնաց նա, և ձին քշած գնաց, անցաւ բլուրների միւս կողմը, ուր լիսնաչափ մշակ մի ընդարձակ արտում դարձեալ նրա համար քըտինք էր թափում.

— Այ դորմի ք'հօրը, հա, որ աղատեցիր էդ անիրաւից, — հարևանի ետևից ձայն տուեց Մէջումն ու կրկին նայեց երկնքին ու մէկ էլ մըմնջաց:

— Այս, Վերնէին տէր, ես մեղաւոր բերանովս կանչեմ, դու արդար ընդներովդ լսես. էս արինքը-տինքնվ, էս լաց ու արտասունքով հնձածս, խնդրւըմ եմ, նրա ջուխտ որդու համար չուել տարուալ զլուխը ժամահաց թիւի տաս, — այլուած սրտից խօսք ուղղելով Աստուծուն, անիծեց Մէջումն ու խորհեց. «Եթէ հարաքեաթ չանեմ, էս տէրամեռը չպրծնեմ, գարիս էս շաբթւայ ճճեքած արևին դիմանալու չի. յուսա-

տեղս էն ա, տաշտըմս խու հաց չկայ. ինչ կի, կի՞, արի ուժ տամ կռներիս» — , ասաց ու խիստ հարաքեաթ արաւ:

Է

Աղքատ Մէջլում ապին զլուխը թաշկինակի փոխարէն խոսով էր փաթաթել, նմանապէս վարուել էր նաև ոսնսերի հետ, որովհիտև գուլպայ չունէլ. Թաստակները պաշտպանում էր շալի կոշտ փաթաթանով, իսկ կուրծքը կրծկալի նման մի կտոր այծի չոր ու զուռութ գառած մաշկով, որ, ամեն մի կրուանալիս խոխուում, տրաք-տրաքում էր եղածն է: պաճիճներն ու շապկի առանց այն էլ քրքրուած լանթերը, որ հետզհետէ լցւում էին անթիւ ու անհամար կօծներով, փշերով ու քստերով, արդէն անքուն ցեցի կերած էին գարձել, իսկ այն քըլ-քրուած տեղերին ծզօտը, հասկերը, կառներն ու տատասկներն այնքան էին խփել ու քսուել անողորմաբար, որ լաշը վէրքերով ու խսցերով լցուած բորստի լաշ էին գարձրել. բայց Մէջլում ապին այդ բոլորը մոռացել էր, նրա գարդը մեծ էր, երկիւղը շատ ու հօգսերն անհուն: Մինչդեռ, սովորական չափով, երեսուն տասնեակ տուող տրտը՝ այն մահաշունչ, փակուած հովտի խորքում, ուր օրուայ այն պէլացած շոգին մի մագաշարժ քամի անգամ չէր խաղում, ուր

անապատի պէս զովացուցիչ մի կաթիլ ջուր էլ չկար,  
ուր, Մէջլումը տապից հազիւ էր շնչում, լաւ և ու-  
րախ տրամադրութեան տակ հնձողը՝ հինգ, վեց օրում  
կարող էր հնձել միայն, այն էլ պարծանքով, պարտքի  
տակ հեծող, ցամաքած, չոր տախտակ զարձած մար-  
մընի վրայ գոյացած սպիների բերանից՝ ծծովկծուկ  
արիւն-քրտինք տնուող Մէջլումը, կծաղքի պէս մէջքը  
կուացած, յետին թեւն ընկած ծերուկի նման, արևառ-  
շնքի կաշին կեղեւի պէս վեր կացած Մէջլումը, իւր,  
արնանուազ բազկով կէռ մանդաղի բերանից սև սըր-  
տով պէծ ու կրակ թափելով, օրական վաթյունն  
խրձան փոխարէն, ուզում էր հարիւրը հնձել:

Եւ, նա, թէպէտ նոր արտը մտած ժամանակ  
տաքացած տանում էր այն տանջանքը, կամ չար  
խաչը, սակայն թւում էր թէ՝ կէս ճանապարհին,  
մի դարիվեր, թէ գարուփոսում անշուշտ պէտք է  
նուաղի, և՛, կապարի ծանր բեռան տակ ճնշուած  
բեռնակը պէս՝ պէտք է թլանայ, ընկնի ու տնքայ...

«Օրը ճաշ էր դարձել» և արեգակն արդէն զէ-  
նիթին հասել. իրենց սեփական արտերը հնձող  
մշակներն արդէն ճաշել և մի քանի անդամ ստուեր-  
ներն էին փոխուել հանդստանալու, իսկ ագահացած  
Մէջլում ապին՝ աչքերի կոպերը մզմուղ ու մլակներով  
լցուած, և, բոռ ու ճանճերը շնքից կպած՝ խրուել  
էր կառնուտ վըարի մէջ, և, արիւն-քրտինքով ողո-  
դուած, դեռ շարունակում էր տնքալ մի շնչի:

Բոներն ու բախաները, գետնին իջած բաղմերամ  
թուզունների պէս, շարտել էին հարիւր ու հազար  
անգամ կռացող ու կտրող Մէջլում ապնի ետևից,  
մրջիւններն ու միջատները տեղներից շարժուած՝  
քոտքստում էին նրանց մէջ և բազմերանգ թիթեռ-  
ները թլթլում վրաները և թուզկոտում դէս ու դէն:  
Մինչև այդ ժամանակ Մէջլումն ատամի տակ պա-  
տառ հաց չէր գրել և ոչ նհար արել, անօթի էր  
աշխատում: Կա հացն էլ էր մոռացել, կէմը պակող  
չիփլախ երեխալին էլ, որ որբի նման մի թփի տակ  
էր քաշուել, ու, քրտնքի ցողը երեսին, նղղել, քը-  
նել: Այդ միջոցին մի գիշակեր ցաքուտներում որս  
փնտուելով, թւեատարած պտտում էր վերևում, իսկ  
մի գալլ ադրաւ, բերանը բաց, արտի վրալիցն անց  
ու դարձ էր անում, կարծես միտքը, ծռած և թփի  
տակ նիրհող երեխալին նայելով, կռաւում էր խիստ  
տհած:

—Ալս, ալ անտէրնի, եարաք ձեր մտքին ինչ  
ա, որ, Ղարինի պէս, պտտում էք զիխիս ու ձեր էդ  
բայլուշ ձէնովն աւելի սևացնըմ սիրտս,—փշալից  
բուռն ու մանդաղը ձիոքին շշուած էր Մէջլումն  
ու էլի շարժում բազուկները:

Բայց նա վերջապէս յետ դարձաւ, մէջքը դգեց  
և ճակատի քրտինքը քերելով, «Ուհ, բո՞լ ա, սովե-  
ցի», ասաց ինքն իրեն և յոքնած քայլերով քաշուեց,  
մի ցաքքու ստուեր, ուր երեխան էր: Մէջքի վրայ

ինքն էլ պառկեց, փոքր ինչ հանգիստ առաւ, ապա արորելով զարթեցրեց նրան և գունդին առաջը քաշելով, պաշարը հանեց: Մէջլումը սխտորը մի բըռ-նաքարով ամանում թակեց, քացախն ածեց վրան և գարու բորբոսնած ու չորացած հացը մէջը բըթելով, կերաւ երեխայի հետ ու տակի մնացորդն էլ վրա-քաշեց. խմեց, ու, այլևս առանց հանգառանալու, կրկին արտը մտնելով, պատուիրեց երեխային:

—Ակոն ջան, էլ չքնես, այ. էն դուշերը հէնց իմանըմ են, թէ քնած հօրթ ես, կզան աչքերդ կհանեն, գնա կէմը պոկի ու բեր էս շւաքըմը դասի, ըրիկնահովին կապիլու եմ խուրձ:

Մէջլումն, ինչպէս ասաց այդ օրը հարիւր խուրձը հնձեց, կապեց և տասը տեղ տասնեակներ դըրեց ու այնպէս տուն դարձաւ երեկոյեան:

## Ը

Երկրորդ օրը Մէջլում ապին. էլի նոյն դարդը սրտում և նոյն թախծալից խօսքերը կրկնելով, նո-րից մտաւ արտը:

—Ին էրկու օրավար դարովս պէտք ա պա-հեմ ճլբաց երեխեքս, նրանցով պէտք ա տամ քեօխ-վի, կոռ ու բէզիառի ու պարտքատէրերիս ջուղաբը, ընէլ որ կծղի, հնձելիս բոնումս փշրկ՝ աչքիս լի-սիցը պէծեր թափի, ո՞նց անեմ, պէտք ա դուռնէ

դուռն ընկած միւր անեմ, էլի..,—ասում էր նա ու հայ տալիս կռներին:

Այդ օրն էլ յաջողուեց հարիւրը հնձել ու բարդել, իոկ վերջին օրը Մէջլումն այնքան յոդնել էլ, այնքան թլացել էին նրա բազուկները, որ, թէև շարժում էր, սակայն բուռը բոնումը թլանում, թափում էր: Նա այդ օրը մինչև ճաշը նոյնպէս ոչ նհար էր արել և ոչ ճաշել. քացախն ու սիտորը սպասում էին գուղիւրմ, բայց նրա ախորժակը հէնց առաւօ-տից էր պինդ փակուել, որովհետև մի բանից զգուածի նման շարունակ թքոտում էր շուրջն ու ճլմկոտալէ ասում ինքն իրեն:

—ՈՌՎՓ, ՈՌՎՓ. ջանս վեր առել ա. սիրտս պըտ-դուրմ, ու, ջիգարս կրակի պէս կառ ընկած էրւըմ, խորովւում ա: 0՝, կասես, թէ՞անտէլ ու սե մահը էն մսակեր դշերի պէս գլխիս պտըտելիս ըլին: Ա՛խ, ինչ մտաւ սիրտս, որ սհէ շանջու ա տալիս, որ սհէ ծարինի պէս չանկերը թաղել ա սրտիս մէջ: ՈՌՎՓ: Զլի՞ թէ՞ ըռաւօտը, որ անօթուց քիչ ջուր կում արի ընտուցի զատ բհամ էկաւ սրտըմս: Ա՛խ, Աստւած, բա ո՞նց չես խղճալ սոված ու ծարաւ էրեխանցս. դու էլ հու Պահրամանը չես, նրանց Տէրը, նրանց սը-տեղծողն ես..,—արդէն բուռը թափած, մանգաղը մի կողմ ձգած, գէմքը տիսուր ակօսներով լցրած և սիրտն ամպամած, մէկ-մէկ կուրծքը տրորելով, ըըշ-չում ու դողդողում էր նա, իսկ երեխան աչքերը լցը-

բած, կողքին կանդնած նայում էր նրան:

— Ուժ, ուժ... Ախ, թողեմ, գնամ, թէ էս  
մի քանի բուռն էլ կապեմ, ետո...»

Խիստ շուարած, շփոթուած ու ալեկոծուած-  
դրութեան մէջ խեղճը գունատուեց, սիարթնեց,  
Եթեաց ու ձէնը փորն ընկած յանկարծ վայր ընկ-  
նելով, մի յուսահատական ձայն միայն արձակեց:

— Վայ, բալա ջան, մեռնում եմ, — ասաց ու  
աչքերը յառեց դէպի երեխան:

Տեսարանը յուզիչ, տեսարանը սրտակտուր ու  
սոսկալի էր, բայց սոսկալի էր ոչ այնքան Մէջլում  
ապնի համար, որ մեռնելու էր, որքան ոտարոբիկ, թը-  
շուառ երեխայի, որ փշերի ու սրհարների մէջ «վայ, ապի  
(հայրիկ) ջան, վա-այ... էր կանչում ու ահաբեկւած  
պտտում շուրջը, համբուրում, դիրկն ընկնում և  
հարայ տալիս, — Ասուծուն, սարերին, ձորերին ու  
քարերին օգնութեան կանչում:

Մէջլումը, երեխին մեղքանալով, խոտերից բըռ-  
նելով, աշխատում էր տեղից վեր կենալ, բայց չէր  
կարողանում, էլ հալ ու հարագեաթ չկար: Նա ըս-  
կեց մէջքը կոտրուած լորտուկի նման փորի վրայ  
սողալ դէպի ցաքին, ուր գտնուում էր նրա գուղին  
ու սափորը, որի մէջ փոքր ինչ չուր կար, երեխան  
նրան օգնում էր, որքան կարող էր: Մէջլումը մի  
կերպ այնտեղ հասաւ, դողդողալէ չուրը դիմին ա-  
ծել տուեց, բայց զուր, զոլ չուրը չփրկեց նրան և

նա կրկին մէջքի վրայ վայր ընկնելով, սկսեց տըն-  
քալ ու վրաչալ:

— Վայ, մեռուայ, վա-այ մի կաթիլ սառը ջուր, էր-  
վիցին, էրւիցին. Ասծու սէրը, քէօմակ արեք, մե-  
ռուայ. վա- ա այ..., — աղաչում էր նա և համարեա  
անշարժ աչքերով նայում երկնքին, իսկ երեխան օձի  
շանթածի նման պտտում էր ցաքքու դլիսով և ա-  
զիողորմ ձայնով նորից հարայ տալիս:

Այդ աղէկտուր ճիշը սարսափ տարածեց արտե-  
րի շուրջը, ստուերներից դուրս թափուեցին հնձող-  
ները և ձայն տուին մէկը միսին:

— Ա՛, էն ինչ ձէն, էն ինչ ճչոց ա:

— Մէջլումի էրեխան, ա. ասըմ ա «եկէք  
հա...»

— Արա, բա իմ էք կաղնել, անդամ դնըմ. վազ  
տըւէք, է, — մի թմբի բարձր տեղից ընկածին  
աւելի շուտ նկատելով մէէր, վազ տուեց ինքը և  
բազմաթիւ մշակներին հուեիցն արած՝ հասաւ Մէջ-  
լումին:

Մահուան առաջին հարուածն ստացած Մէջ-  
լումն իրեն հասնողներին սկսեց աղաչել, խնդրել:

— Զեղ մատաղ, ես մեռնըմ եմ, ինձ Սարգիւ-  
լին հասցեք, նրան բան եմ ասելու:

— Ա՛յ, ինչ կայ քեզանըմ. Մրգանց Ալէքսանի  
պէս ես ըլել, վախել մի, քու բաղդիցը դալլաքն էլ  
ըստի ա. վախել մի, խզիտակիցդ արին առնի թէ

չէ, լաւանալ դես,—քաջալերելով, ասում էին ոմանք և կրծքին ջուր խփում անդադար, մինչեւ որ գայ, հասնի նաև դալլաքը:

—Ա՞յ, Մէջլըմ, հըմի որ պրծած ես, դալլաքն ելաւ: Արա, դալլաք, նաշտարդ վրէդ ա, —արդէն հիւանդին հասնող դալլաքին դարձած, հարցրին նրանք:

—Ո՞րտեան ա վրէս, անտէր լի նա, տանն եմ թողել,—լոյսները կտրելով, պատասխանեց նա և ըսկեց կասկածաւոր հետաքրքրութեամբ շօշափել Մէջլումի սիրտն ու անդամները:

—Հը՞ ոնց ա, դալլաք ջան, —հարցրին նրանք:  
—Նաշտարձան կայ:

—Բա լինչ, կայ, ամա նաշտար չկայ:

—Թիւհան, եանի փեշաքեար ես գլխեդ գիբածը մի ծանդը բան խու չի, հետդ ման ածա, էլի:

—Դալլաք, ծէրը սուր դանակով լիլ չի, —հարցրեց մինը:

—Կլնի. թէ ունես, բեր, —ձեռքը մեկնելով, ասաց դալլաքը, առաւ դանակը և սկսեց անյադ կերպով խղիտակի երակների մէջ խրել և մնացած արիւնն էլ նա քամեց, որից լիտոյ հիւանդն արդէն անզգայ դարձաւ, չէր խօսում, միայն լուռ ու պէլ պէլ նայում էր նրանց երեսին և երեքմն նոյնպիսի հայեացքով փնտուում ճչող երեխացին:

—Է՞հ, վախտն անց ա կացել, —ձեռները կցելով

և հողւոց քաշելով, լետ կանգնեց դալլաքը և ծածուկ յայտնեց Մէջլումի անյուսալի լինելը:

Հիսողետէ նորանոր հարահասներ էին ժողովւում հիւանդի շուրջը, բայց ի զնւր, որովհետև ոչ ոք օգնել չէր կարողանում. անգութ մահը ծանրացել էր աղքատի կրծքին և հոգիառը մտել նրա աղքատիկ խրճիթը, որի դրան առաջ, անմեղ և անհոգ գառների նման, քար ու փայտի ետևեց ընկած, խաղում էին նրա անչափահաս և չլբաց իրեխաները, իսկ նրանց անբաղդ մայր Սարգիւլը՝ վեց երորդին հարամի տղրուկի նման ծծից՝ կրծքից կպցրած և եօթներորդն արգանդում խրճիթի գրրան մօտ՝ գողնոցն ածած փիփերթն ընտրում, կըտրտում էր, որ՝ ջարդուած ու փշրուած Մէջլումի չոր պատառը թրջելու համար երեկոյեան ուտելիք պատրաստի...

Անօրէնների ձեռն ընկած հայ-քրիստոնեայ Մէջլում ապնի խրճիթը, որ ոչ սողիսաղք ունէր, ոչ ուրահ, շինուած էր գիւղի ձախ կողմում, ընկեր-հարեւանից հեռու, կարծես խորթացած: Բայց միթէ այդ էր նըրա պապական տունը, որտեղից, կարճ ժամանակից առաջ, էլի վաշխառուներից մէկի ձիռով դուրեն էր վլոնտուել հետեւեալ կերպով: —Սովի, հարկի ժողովման, և կեանքի ուրիշ նեղ բոպէններին՝ փորը քաղցած, գրպանը դատարկ, ձեռը ծոցումը պաղատող աղքատի անել զբութիւնից օգուտ քաղելով Գիգնի

տղէն, մի անգամ մի խան կորեկ, միւս անգամ հինգ խան ցորեն, տասը խան զարի, և կամ միքանի շահի փող տալով տոկոսով, կամաց կամաց, տուածի կամ տոկոսի հաշւում կտոր կտոր խուզելով Մէջլումի լայն տեղն ու պարտէզը, որ գիւղի աչքումն էր, յափշտակել էր, երեխին ծեծել, հաւի ոտը տուել, կոտրել կալն ընկած ժամանակ, կռուել, հայհոյել, մի խօսքով այնքան էր նեղացրել նրան, որ մնացածն էլ ստիպուած մի խոզի հետ փոխել էր խեղճն ու դուրս եկել, ազատուել հզօր հարեւանների ժանդ ու ժէնից և գնացել՝ արեւակէզ մի ապառաժուտ լանջի կոնատակ մտել «Եթիմ ուլի պէս»:

Եւ, որովհետև ցամաքի գորտերը քարափների խոռոչներում են թագնւում ցերեկով և ապառաժներում ցատկուում գեշերով, այդ պատճառով ծաղրան գիւղացիք, առանց ամաչելու, իրենց աղքատ ու թշուառ իղբայր Մէջլումի խրճին «քարճուտի գորտան պիւն» էին անուանում ծաղը անելիս և կիրակի չկար, որ այդ անմիտ ծաղրով չզուրճանացին և չկարմրացնէին իրենց փառք ու պատուից զրկուած, աղքատութիւնից հալածուած ընկերին, փոխանակ օգնելու և սիրտ տալու նրան...

Փորտան բնի հանդէպը ուսաւոր մի բլուր կար, որի վրայով հանդից եկող սալուզին իշնում և անցնում էր խրճին մօտով, որի գուռը գէպի բլուրն

էր նայում, իսկ այնուեղ խօսողի ձախն խկոյն խրճիթը հասնում:

Արեգակը մայր մտնելու վրայ էր. բլրից յառաջացած ստուերն արդէն անցել էր խրճի վրայով, երբ մի օտարօտի, մի գուժաբեր խօսակցութիւն գընդակի նման Սարգիւլի ականչին հասաւ:

— Օ՛վ-վէ, խեղճ կնիկ, հրէս բառանչիլ, սիրտը ճագիլ պտի...

— Դալլաք, մեղք ու կրակ ա, գլուխը բացը բռնի, կախ մի՛ գցիլ...

— Հէնց իմանալ պտի, թէ մեռած ա...

Այս անորոշ խօսակցութիւնը Սարգիւլի սիրտն ահաւորեց: Նա, փիփերթի թևերը ձեռին, մի առժամանակ ճանապարհին նայելով, մնաց քարացած, նստած, ալանջ էր դնում, որ մի որոշ բան հասկանալ:

— Աղա, Սիմոն, էդ ով ա, էդ ինչ ա ըլել, — հարցնում էին ճանապարհի տակ ու գլխից տեսնողները և աշխատում ետևներից հասնել:

— Մարդանաց խեղճ Մէջլըմն ա, ով ա, մեռնը ա խեղճը...

— Վաշշ...

— Տուր ա դիպել, այ...: Արա, արին էք առել...

— Բա ինչ, արինն էլ չօգտեց...

— Ա՛, Մէջլըմ: — Երեսին ձեռք տալով, հարցրեց մի ուրիշը, չիմանալով, որ նա համբացել է արդէն:

— Լիզուն կապ ա, որ հարցնըմ ես, կարըմ ա

խօսակ, —բացատրում էին բերողները և, երկու ձողի վրայ, դագաղի նման վերցրած՝ առաջ էին տանում:

Այդ միջոցին Սարգիւլը փիփերթը թափել էր գետնին և երեխան դէնը շպրտել, ու, մնացել կանգնած, կարծես չէր ուզում հաւատալ իւր ականջներին, կարծես դիտմամբ իւլացնելիս լինէր իրան, որ գոյժը ըստի. բայց, երբ բերող խոսմբը բոլորովին դիմացը դուրս եկաւ և Սարգիւլը տեսաւ, որ անկասկած իրողաթիւն է, կարիճի շանթաճի նման իսկոյն շարժուեց տեղից և բունն օձ մտնող դուշի պէս թաթաչչար գալով, իրեն բազկարձակ ներքեւ նետեց և սկսեց գլխին տալ, մագերը գետել ու երեսն արնաթաթախ անել եղունկներով:

—Վայ, աման, քոռակամ ես, ջընազա կապած էդ ում էք բերը՝ մ. էդ ում տէրն ա մեռնըմ, վայ, մի տուն լվքը քիւլիթատէր աղքատինս վայ, վայ, —կրկն և կրկն գլխին տալով, աղաղակում էր նա և կրակ գոռմամենի սիրտը:

Անզգայ հիւանդին վայր գրին խրճիւ գրանը՝ ծառի տակ: Սարգիւլը ոռքեց կոտքին և կուռը զգի տակը տալով, բարձրացրեց և լալաղին ձախով հարցրեց:

—Էդ ինչ ես ըլել, էդ ո՞ր եաղին ու հարամին ա աղինդ ծծել, ասա, խօսա տենամ. ով տունդ քանդեց. վայ. էս ինչ ա քու հալը...

—Անահ, անդդ, —այս եղաւ միայն մահը կոկորդը

Փողովուած Մէջլումի պատասխանը, որից ոչինչ ըլլ-հասկացուեց: Նա աշխատում էր ձեռքի նշանով գոնէ մի բան հասկացնել Սարգիւլին, սակայն ձեռքերի ամեն մինը ծանրացել կարծես մի մի փութ էր դարձել, չէր կարողանում տեղից շարժել:

—Վայ, քոռակամ ես, կուրանամ ես քեզանից եղը ապրել չեմ ես, ինձ ջնուրը կցցեմ, ինձ սարին ու քոջին կտամ գժի պէս, —երեսը երեսին դրած, ողբում էր նա, իսկ Մէջլումը, որ յոյս ունէր բաց լեզուով տուն հասնել, Սարգիւլին բան ասել, երեսին պէլ պէլ նայում էր միայն:

Մի ժամից յետոյ, նա արդէն աչքերը փակած, ձեռքերը կրծքին դրուած, շնչում էր ըլոր ուժով և մեռելագունած ճակտաից շաղի նման մահուան սառը քրտինք տալով, հետզիետէ թլանում էր ամբողջ մարմնով, իսկ իրեն ձեատող արնալուիկ՝ Սարգիւլը անյոյս, անմիիթար, վրա էր բերում բուռնցքը, շարդում, փշրում իւր գլուխը և, մեղեգու նման, տխուր եղանակով յօրինում իւր սուզը:

—Մէջլը ջան, խալխը կհնձեն, խալխը կըփնջեն՝ կէռ-կէռ դիզան կդնեն. կալ կվատեն անուշ հօռոլով, ես էլ եթիմնիդ եղեկցս արած, գոնէ գուռը ման կըգամ: Գու թողած հարսաւութիւնն էրկու օրավար գարի ա, ընէլ՝ պարտքատիրոջ աչքը տրաքըւի, հլա հնձուիլու, ոտի վրայ կաղնած ա հրէ հանդըմը. քու հարսաւութիւնն էս վեց, օխտը եթիմ-

նին են. ևս ո՞ր մնին պահեմ, որին հաղցնեմ, ո՞րին  
տառցնեմ, վայ, վայ, վա-ա-այ...

Այս, Աստօծ, այ Աստօծ, եանի լինչ կլնէր, որ  
էլ էս խեղճ ու նաշար էրեխանցս էլա ողորմայիր.  
կերածները չոր ու ցամաք ճաթ էր, ընդուցալ խի  
զրկեցիր, այ բէյմրուաթ Աստօծ:

«Աստուծուց էլ անմխիթար, բանդից էլ», բողոք բար-  
ձած նա ցոյց էր տալիս երեխանցը, որոնք՝ մէկի տոր բաց,  
միւսի ոտն էլ, գլուխ էլ. երրորդը բոլորովին մերկ, չոր-  
րորդը և հինգերորդը լանթոտած շապկների կեղտոտ  
օղակները միայն վզներին մնացած, ժողովուել էին  
շուրջը և մօր արնակալած այտերին ու արտասուա-  
լից աչքերին նայելով, որբ եղնիկների նման վիզները  
ծռած, ուսմներովը ձգած՝ լալիս էին սվուալէ ու  
ապառաժներին էլ լացացնում:

Մութն ընկել էր. հանգերից ու դուներից  
խրճիթ մտնողները ձեռքները ծոցներին, արգէն  
բոլորովին շնչող մարմնի առաջ կանգնել էին սգա-  
զգեաց, նայում էին բերանին, որ՝ ոտների և ձեռ-  
ների վերջին անգամ չբմեխելու հետ միասին  
մի անդամ ևս բացեց և այնուհետև, անխորհուրդ ու  
անհաղորդ, մօմի պէս յաւիտեան հանգաւ:

Հոգին տալիս Սարգիւն իրենից զնացել, նուա-  
զել, փայր էր ընկել գետնին, կանայք վրաթափուած,  
ճշալով ու ծղրտալով, ջրով յետ էին բերում նրան,  
իսկ տղամարդիկ մերկացնելով Մէջլումին, հանում

էին լանթերի միջից: Հանեցին, մեկնեցին խրճիթում և  
կլոները նորից խաչելով, խփեցին աչքերը, և մի կոշտ ու  
կեղտոտ կարպետ, որն ամբողջ ընտանիքին և՛ վերմակի  
տեղ էր ծառայում և՛ ուրիշ բանի վրայով ու երեսովը  
քաշեցին և մի պրատ պէնձիկում երկու պտղունց  
խունկ ծխեցին նրա արդար, նրա անմեղ ու տանջուած  
հոգու համար:

Վայրենիների նման վարքները կոպիտ, անհաշտ  
ու անտաշ ժողովուրդ էին Կ. գիւղացիք. մէջները  
ոչ դարբին կար, ոչ որմնադիր, ոչ կարգին դալլաք,  
ոչ տէրտէր, ոչ կրթուած մարդ և ոչ էլ ուսումնարան.  
մի խօսքով նրանք ամեն բանից զուրկ էին, ոչ ոք  
իրան երեխային հանգից զուրս՝ ոչ մի տեղ կամ քա-  
ղաք չէր ուղարկում, որ զնայ բան սովորի, մարդ  
տեսնի, մարդ դառնայ: Այդ գիւղում միայն զողերի  
և խողարածների առատութիւն էր, ՚ի բաց առեալ  
միմիայն մի քանի վաշխառուների, որոնք խճուղուե  
կամ ուրիշ գործերով ու պաշտօններով պարապելով,  
փող զիզելու և ժլատութեան մէջ վարժուելով՝ ա-  
տամները սրած զաղանի պէս մտել էին զիւղն ու  
բնակութիւն հաստատելով, մաշկում, խորխահան էին  
անում խեղճ աղքատներին:

Մի քանի ծերեր կարծում էին, թէ Աստուծոյ  
պատիժն իշել է Կ. գիւղի գլխին:

—Առաջ՝ Աստուծ, սէր, խաղաղութիւն, միա-  
պանութիւն, մեծ ու պուճուր, հընկեր-հարևանութիւն

կար, հըմի ամեն բան խառնուել ա, ով էր տեսած էսպէս խալիք...

— Ես դեղն անիծած ա, ինչ տէրտէր օխնիլ ենք տուել, կացել չի, մեռել ա, — դատում էին նրանք:

Դննդեան, մկրտութեան, մահուան և այլ ծիսակատարութեան համար նրանք էլ խասեցոց պէս շարունակ ուրիշ գիւղի երէցի ետևիցն էին քաշ գալիս: Առաջին անգամը չէր, որ այդ գիւղում, մեծ կամ մասնուկ, խեղճ Մէջլումի պէս՝ հաղորդի էլ էր կարօտ մնում, ծոմ ու պատարագի էլ: Ջատ ու շատ անգամ գաղաղի ետևից գնացող սգւոր տղան հօր հասցէին այսպէս էր ուղղում իւր ծիծաղաշարժ ողբերգո: — «Վայ, պաշտըմ-պատարագի համրաթ ապի ջան վայ, էդ ուր ես գնըմ. հէ կցար ոչ թէ՝ մի պատարագ էլա տենամ. վայ, պատարագի հասարաթ ապի ջան...»

Ամառնէն օրը խեղճ Մէջլումի դին պէտք է հոտէր, եթէ հարևան գիւղի տէրտէլն էլ սատանի ձին թամքէր: Կ. գիւղը, մինչև նոր երէցի ձեռնադրութիւնը, ժամանակաւորապէս հովում էր Ա. գիւղի ծխատէր քահանայ Տէր Սոկոնը: Սրա անունը թէպէտ Տէր Սիմոն էր, բայց Տէր Սոկոն էին առում, որովհետև իւր պապական մորթու զլխարկը, նայելով աշխարհի սովորութեան, փոխել էր եւրոկան շապոցի, իսկ շապօն նման էր ափերը կոտրտուած անկլել մի ափսէի և կամ չորացած, խու-

նացած ու ափերն արևելց իուչ եկած սունկի, որը կարծես թէ տէր հօր զլխին երկնքից իջած պատուհաս լինէր. մի անգամ զլխին էր դրել, էլ չէր զլմշում, որ դէն ձգի. ասում էին «վախըմ ա թէ նորն առնի, ընէլ ընդուր պէս խարաբ ըլի...»:

Ելդ տէրտէրի բնաւորութիւնից-«խոյ ու խասիաթից» էլ կրակում էին մնացել գիւղացիք. մի անգամ խնդիրները յարգում, մարդավարի գալիս, ծէսները կատարում էր, միւս անգամ Աստուծոյ պատիժ գառնալով, «կեալիս չեմ, գնացէք ձեզ համար ուրիշ տէրտէր օխնիլ տըւէք», ասում էր ու զալը եղան նման ոտը գէմ անում և կամ քարով ու քոլով զցում նրանց ջէն գիւղի տէր Քօսակի պէս \*:

Ա. գնացող մարդուն, Մէջլումի միակ բազգից երւէ, չէ չասեց Տէր Սոկոնը, բայց գալով Կ., հէնց խրճթի գրանն իջնելուն պէս՝ «Էրկումանէթ թաղմահարկ» պարտքն էլ նա գրեց վշտակիր և անճար Սարգիւկի զիին:

— Կտաք, կթազեմ, տալ չէք, կթողեմ, որ Հոտի, — պնդում էր նա: — Չունի, թող սանաթտայ, — աւելացնում էր նա, հոգեւոր վաշխառուն:

Բայց նոր, աւելի անգութ և սոսկալի տեսարան, մի ամօթարեր իրողութիւն ևս: - Թաղումն ուշա-

\* ՏԵս «Մոռացուած Աշխարհ»-իս Գ. գրքում «Ասկեմբիրի պսակը»:

նում, ձգձւում էր, որովհետև կարծես չցեռն անիծել էր  
խեղ Մէջլումին թէ՝ «պատան-փաթաթանդ էլ պարտ-  
քով առնեն»։ Պատանք առնող չկար։ Միքէն այր-  
տում էր, ձեռին փող չունէր, Ղահրաման աղէն ևր  
զոհի մահը չիմանալուն դնելով, քալացել, քաշուել  
էր գիւղից, դատաւորները մտածում էին Մէջլումի  
մի քանի հաւը ծախել ու տէր հօր թաղման հարկը  
տալ, իսկ ձեռքները ծոցներին կանգնածներից ոչ ոք  
ձեռը գրպանը չէր տանում…

Այդ գժուար բոպէին գիւղական դուքանչին միայն  
այնքան բարի գտնուեց, որ երեք ամսէն ժամանա-  
կի, շահը վրան դալով, մի ժամէթ ապառիկով երեք  
դազ պատանքի կտաւ տուեց և, իւր երկար ձեւի  
խորհրդաւոր դաւթարումն էլ ու թանաքով նշա-  
նակեց։

Արջապէս, Մէջլումն արժանացաւ թաղւելու։  
Նրա դին դրին երկու նշափալտերի (նշանափալտերի)  
վրայ, Տէր Սոկոնն էլ իւր՝ ծղողուած, «քօսու ջուլ  
դարձած շուրջառը շուռ ունելով», «Զարհուրեալ դո-  
ղան… արարածք ամենայն» շարականն սկսելով, ա-  
ռաջ ընկաւ Աղքատին աղքատներն ուսներն առան,  
ճանապարհ ընկան. իսկ Սարգիւլն իրեն խրճիքի պա-  
տերին խփելով, սկսեց վայ տալ ու սգալ անմխի-  
թար-«վայ, բա որ գնում ես, մեր արտն ով դի հըն-  
ձիլ, էս եթիմնին ով պտի պահիլ.., — աղաղակում  
էր նա։

Այդպէս, անհաղորդ, անշուք, անդադաղ Մէջ-  
լում ապնին տարան խորն ու խոնաւ գերեզման ի-  
ջեցրին, ուր նա հանգիստ քնեց յաւիտեան և, վեր-  
ջապէս, աղատուեց նա փուչ աշխարհից ու փուչ-մարդ  
կանցից, իսկ նրա ագրին դեռ պիտի ապաւինէր Աս-  
տուծոյ դատաստանին։

Դ.

Օրն անցել, արեգակը մայր էր մտել, իսկ արեկի  
վերջին նշովները սարերի կատարներից կատարներն  
ընկնելով, թռել, անյալտացել էին անցած օրերի պէս։

Հնձւորները, աջ ու ձախ, հնձատեղերից ման-  
գալները կռներին, հարսն ու աղջիկներն աղբիւրից  
կուժ ու սափորներն ուսներին տուն էին դառնում  
ուրախ-ուրախ, իսկ վշտակիր Սարգիւլը, ծուխը կրտ-  
րած կտրից, դատարկուած կուժը պատի տակ նետած,  
գուռը վրա էր դրել գժոխքի դրան պէս, փակել իւր  
փակուած սրտի պէս, ու, սուգ էր մտել գորտուն բնում  
և չէր ուզում տեսնել այն հնձւորներին, որովհետև  
Մէջլումը չկար մէջներին։ Նա, գարտերից ծանրա-  
ցած դլուսը բռնել էր պինդ և, կարծես, Աստու-  
ծուն Աստուծու դէմ էր բողոքում։

—Տէր, քե եմ ասըմ, թէոր դու արդար դա-  
դաստան ունես, իսի չես էն արնկերի կնկանն էլ իմ  
օրը զցըմ, նրա ամարաթն էլ իմի պէս «գորտան  
պիւն» շլնըմ, իսի չես նրա խաս ու զումաշ կ'եցած

որդիքն էլ՝ սհէ, էս չիլ ու չիփլախ եթիմներիս պէս եթմացնըմ, ու, մերկ, լաշները բաց, անօթի ու ծարաւ խալխի դռներին թողըմ. Հը՞. այ բէյմրուած Աստուած...

Սոյն հառաջանքն ու հեծեծանքն էր լսում նաև գոմից ու Սաքնանց դռնից, ուր Սահակի տատը, մի պառաւ ութևուն տարեկան կին՝ մի ձեռը իւր կոտրուելու չափ կռացած մէջքին սեղմած, միւսովը ձեռնափայտին լենուած, Սահակի որբը մեղքի նման ետևիցն զցած, վազուց անհանդիստ, աչքը ճանապարհին, կուլուկրուզ, ոտները հազիւ իրար առաջ դնելով, ներս էր մտնում ու դուրս գալիս, և, մէկ գոմին, մէկ էլ զիմացի սէլհարքին նայելով, նիհարացած ու չմշկած ալտերն արտասու քով լցնում էր ու լցնում...

— 0՝, անողորմ Աստուած, էսքան էլ մարդի կտանջնեն. բա չուել երբ պտեմ էս հրտած, լոստ ու չմշմայ գոմումը հոտ քաշիլ ու տնքալ. ախր ազատի էլի, քու ստեղծածը չմմ, — աղբածակից դուրս նայելով, Սահակը նոյնպէս չէր դադարում բողոքելուց ու մորմոքուելուց. լուռը միմիայն Կ. գիւղի հանգստարանի բնակիչներն էին, լուռը միայն Մէջլում ապնի գերեզմանն էր, որ չէր խօսում, չէր բողոքում...

Բայց, այդ գերեզմանական տիրութիւնից և լուռը իւնից լետով, աղքատների արտասուքի և հեծեծանքների հակառակ, տեսարանն այլ կերպարանք

էր ընդունել նովրուգովի տանն ու գրանը: — Անտեղ ուրախութիւն էր տիրում: Նրա կտուրներից առատորէն ծռւս էր բարձրանուում, ծառաներն ու նրանց հրսմայող «աղակինը» կամ «խանումը» ուրախ, զուարթ, առողջ, սենեակից մառան, մառանից սենեակ էին մտնում, ուր խորովածի հոտը, մարդու սիրտ քամ էր տանում: Նրա ելեխաներն աղքատների արեան գնով հագած, կապած, փորները կուշտ խինդն ու ծիծաղն երեսներին լորի ճուտերի պէս վլստում էին դէս ու դէն և հարսանքատուն կարծել տալիս, մի խօսքով՝ նրա յարկի տակ դարզի բռն չկար. բայց նրա տունն ու գուռը նման էր մի ծաղկաւէտ ու կանաչագարդ այգու, պարտիզի, որի մէջ, սակայն, օձի շուրջն օձի ճուտերն էին կեանք քաշում:

«Խանումը» դառան չխրժմէն, թարմ ձուկր, համով ու հոտով խորովածն ու խաշլամէն արդէն եփել, պատրաստել էր մառանում. արդէն սեղանի վրայ օղու և գինու գաւերը շարւում էին շարքով, իսկ Ղահրաման աղէն՝ Կ. գիւղի օձերից մինը, Բէղալթին, Պէտօն, Ղիտրին ու միւսներն ամբողջ «կամպանիայով» կը-րապատ երկյարկանի և տեսակ տեսակ ներկերով նախշած շինութեան պատշգամբում՝ մինը չիբուխը, միւսները ծխախոտը բերաններին, հապարտ-հպարտ զրոյց անելով, գեռ շրջում էին յետ ու առաջ:

Այդ միջոցին, Պ. գիւղից Կ. մտնող սէլհարքի թմբում երկու մարդ երևաց: Նրանից մինը մի նի-

Հար, պատուտուն՝ շոր ու շլոթը կարծես փշերի  
բերանին թողած գեղջուկ էր. իսկ միւսը, ինչպէս  
առում են, «աբուո-ը տեղը մարդ»։ Նրանք յառաջ  
գալով, երբ մօտեցան գլուղին, մինը շուրջը պահելով շե-  
ղուեց ճանապարհից և ծածկաբար մի անկիւն քաշուեց,  
մի թփի տակ մտաւ ու նստեց. իսկ միւսը, հանդից  
վերադառնող հնձող ձևացած, շարունակեց ճանա-  
պարհը, մտաւ գլուղը և պառաւի սողլսաքի առջևից  
անցնելով, թէպէտ այնտեղ կանգ չառաւ, բայց պա-  
ռաւին թագուն մի բան ասեց ու շտապեց ծածկուել  
իւր իրմիթամ։

Վերջինս Մէջումի... ու Սաքնի տղի բաղդա-  
կից Միքէն էր։ Ասած է թէ՝ «թշուառն է լինում  
թշուառին կարեկից»։ արդարեւ, այնքան գիւղացի-  
ների մէջ միմիախ Միքէն էր լսել խեղճ, չորացած ար-  
ևածաղկի պէս կռացած պառաւի ու որբի լաց-ար-  
տասուքի, ախ ու վայի և Սահակի հառաչանքի  
ձայները։ — Պառաւի խնդրանօք նա առաւօտեան  
վաղ-վաղ հարայի էր զնացել Պ. ուր, մի զաղափա-  
րական ուսուցչի՝ մի հազուազիւտ աղնիւ ու սիրելի  
գործչի մօտ ծառայում էր Սահակի միակ ազգական  
Գլքօն, որին նա, Պէտովի ու Ղիտրինի գատավճռի  
միջոցին, յուսահատուած օդնութեան կր կանչում։

Գլքօն էր թփի տակ ծածկուողը։

Վեց տարի առաջ Պ. գիւղն էլ էր խաւար. Պո  
գիւղի աղքատներն էլ էին զիշատուում վաշխառու-

ների ճանկերում, բայց շնորհիւ «Ախմոն վարժապետ»-ի  
անխոնջ ջանքերին, գիւղացիների աչքը բացուել էր  
արդէն. նրանք ճանաչում էին «իրանց խէրն ու  
շառը» և իրենց չարակամն ու բարեկամը։ Առաջ ովկի  
կհամարձակուէր ձայն հանել տանուտէրի, հարուստների  
ու վաշխառուների առաջ, նրանց ասածն ու արածը  
պատգամ, օրէնք էր «անլիքու հայվան» աղքատների  
համար և հրամանն անդառնալի։ Հարուստն առաջ,  
աղքատը լիտ, կարողութիւններն անհաւասար, վա-  
րելահողն անհաւասար, և կոռ ու բէդիսու միայն աղ-  
քատների վզին. նրանց ջրելու ջուրն սուսատ, սը-  
րանցը ծմծման. նրանց կայքը, սրանց հարկը շատ.  
Նրանք ուրախ, միշտ քեֆի մէջ, սրանք տխուր, հոգ-  
ուերով լի. նրանք հազած-կապած բնակարանները  
կրապատ, սրանք մերկ, քաղցած, տունները գետ-  
նափոր կամ խրճիթ. նրանք հարիւրներով ապրանք,  
հազարներով փող ունէին, իսկ սրանք միշտ պարտք  
և ցաւ. նրանք կորագլուխ, համարձակ, սրանք ըստ-  
րուկի նման վիզները ճկած, իրաւունքից, ձայնից  
զրկուած. վերջապէս նրանք մեղագրող, պատժող, իսկ  
սրանք առանց յանդանքի մեղաւոր ու բանտարկուած...»

Բայց, իսկ և իսկ ուսուցչի կոչմանը հաւաստարիմ, աղ-  
նիւ գործչի դրօշմը ճակատին, արդարութեան ու  
հաւաստարութեան զինուոր «Ախմոն վարժապետը» մի  
մի լուսատու ջահ էր դարձել մոռացուած, խաւար  
գիւղի համար, բժիշկ էր դարձել այնքան ախտերի

ու ցաւերի համար: Նա, վեց տարուայ ընթացքում կոռւելով խաւարի դէմ, իւր օրինական և ազդու բողոքներով տանուտէրի և դատաւորների ասլորինի վճռուները քանդել տալով, պատժել էր տուել նրանց, աչքները քախեցրել, կամայականութիւնները կոտրել և բուռն կերպով սանձահարել էր ամբոխի տգիտութիւնից օգտուող ցեց ու տղրուկներին: Ասած է. «Ժուրքին թակիր, որ հետդ աղպէ բանայ». «Սիմոն վարժապետ»-ի գրչի ոյժը փորձելով, վերջիններս նրան ակամայ բարեկամ դարձան, իսկ նա, լաւ ըմբռնելով սրբագան առածի միտքը լժէ՝ «շան հետ աղպէ բացիր, ամա փետը ձեռիցդ մի դցիլ», ոչ մի լոպէ ձեռից բաց չէր ժողոնում, շարունակ՝ մտրակում ու լուսաւորում էր գիւղը: — Նա, բացի մանուկներին դաստիարակելուց, բացի լուր օրերն անդուլ աշխատելուց, աշխատում և գործում էր նաև կիրակի օրերը: — Ֆերին և մանաւանդ երիտասարդներին զլսին ժողովելով, հեշտ, պարզ և անպաճոյն լեզուով հասկացնում էր նրանց իրենց ազգի ծագումն, անցեալը և ներկան. հալածողների, հալածուածների և ազատիչ հերոսների կեանքից իւր կարդացած վէպերով ու պատմութիւններով վառում էր նրանց սրտերը և, սիրով ու քաջալերութիւնով լցնում նրանց հոգին դէպի լաւը, դէպի բարին, իսկ ատելութիւնով դէպի վատոն ու չարը: Ահա այդ կիրակնօրեայ աշակերտների թուումն էր նաև երէկուայ վախկոտ Գիքօն, որը՝

Միքէլից լսելով այն սրտաճմլիկ սկարագրութիւնները, թէ ինչպէս քարշ էին տուել Սահակին ու արիւնաթաթախ արել. լսելով այն անխիղճ ծեծն ու քէօթակը, այն դերեզման շարժող հայհոյանքն ու լըկանքը, որ Ղահրաման աղէն և իւր գեադաները հասցրել էին անմեղ գեղջուկներին, իւր անձն ու ապագան մտացած դալիս էր, որ օգնի, մխիթարի այնքան անմխիթար սրտերը և ազատի իւր զերի դարձած աղքականին:

Դիքօն թփի տակից յօնքերը տօթած, սիրտը տխուր, հոգին տրտմած, գիտում էր Կովրուղովի խըմբին և կարելցաբար նայելով գոմին, մորմոքւում, զարցանում էր ուժգին և անհամբեր...

— Ա՛խ. ես ձեր հէրն անխծես, ես ձեր խըդճմտանքը նղովեմ, ես ձեր... բա Աստօծ վեր կունի, որ դուք, դէէ խալիսի աշխատանքովը քէֆ-գեալաջախ մէջ ըլնէք ու, նա, մաղձը սրտին, արտասունքն ըրիսին գէօլ-գէօլ ըլած, անօթի ու ծարաւ հոտած գոմումը հոդոց քաշի: Ա՛խ, եանի որ մարդ ձեր արինը բռնով, կցով էլ խմի, սիրտը կհովանայ..., — դէպի Ղահրամանի սրահը նայելով, ասում էր նա և էլի սպասում:

Մի ժամից յետոյ արդէն մաւթին էր, — գիւղը գիրկն առած հովիտն իւր այդեստանով, ուր լուսնի ճառագայթները դեռ ուշ պիտի մուտ գործէին, ծած-

կուած էր խաւարով, խոկ սարերի և բլրակների կատարները շօղուում էին հետզհետէ:

Գիշերային խորհրդաւորութիւնն սկսում էր արդէն: Հեռուում խուլ կերպով վշշում էր գետը, երկնակամարի վրայ աջ ու ձախից ժողովուած ամպերը՝ կէս մըթնած, կէս կիսափայլ, երամ-երամ ցրում էին անհուն տարածութեան մէջ, որոնց տակից պայծառուսինը սահում, փալում և անվրդով շարունակում էր իւր ճանապարհը, իսկ նրանց արանքներից ցիր ու ցան եղած աստղերը մանկան աչիկներով նայում ու ժպտում էին վերնուց:

Ճրագները մարտում էին, կրակներն առկայծուում հետզհետէ և գիւղացիները քնում: Այ ոչ ձի էր խրինջում և ոչ շուն հաջում. քամին կտրած, զեփիւը շոյիւն, օդն անուշ, գովը դուրական և գիւղը խաղաղ էր, խոկ Գիքօն թփի տակ բորենու լուռութեամբ յօնքերն էլի տօժած եռ էր գալիս շարունակ:

Այդ միջոցին երկնքի մի կողմը, հորիզոնի սահմանի վրայ, խիստ շառագունել ու կարմրուուել էր պղտոր արեան նման, իսկ բուն եկել զահրաման աղիճրագի դիմացում վայ էր տալիս ու գիշերուայ խաղաղութիւնը խանգարելով, կախարդում, դառնացնում էր քաղցր բնութիւնը: Երկու երկութիւն էլ ըստ աւանդի դժբաղդութեան նշան էին գուշակուում գիւղում:

«Հոյ, վոյ, վայ», — անվերջ շարունակում էր բուն

և լսողի ու լքող սրտերի վրայ սարսափ տարածում իւր տհաճ ձախով, որն այդ ըոպէին, ընդհակառակն, խիստ քաղցր և հաճելի էր թւում միմիայն Գիքոյին:

— Ճան, Ճան, ա բայզուշ. գու էս գիշեր իմ ընկերն ես, և յիմ հալալ աղպէրը. էնքան վայ տուր, որ ես էստեղից գուս գամ ու քեզ համար էլի վայընկեր ու վայ տուրողներ գտնեմ... — շշնջաց նո և կըլին լռեց լցուած:

Նրա ուշքը գոմի կողմն էր և ահա այնտեղից Միքէլը կուզուկուզ անելով, ահը սրտումը, մահը մտքումը, լրտեսի նման՝ կամաց կամաց մօտեցաւ Գիքոյին թէ տանից, թէ գոմից համբաւ բերելով, խիստ ապահովացրեց նրան:

— Հը՞ն, ի՞նչ արիր, — ձայնը թագցնելով, հարցրեց Գիքօն:

— Գնացի, թէ տատին, թէ Սըհակին, էրկուսին էլ պլինդ պահ տուի (զգուշացրի), — պատասխանեց նա:

— Ի՞նչ պահ տուիր, Պասածը՞ս, թէ ոչ...

— Ասածդ: Ասեցի Գիքօն եկել, սըհէ մի բան պտի անի, ամա չլինի՛, չիմանաւ, թէ լիզուներդ պըռնդներուիդ տաք ու ասէք թէ Գիքոյի ետևից հարացչի, մարդ ենք զրկել. ինչոր հարցնեն, ասեցէք մենք գիշը չենք:

— Հա, ապրիս. էտպէս: Հու լաւ պահ տուիր:

— Բայս, մինչև անդամ ասեցի, որ իրար էլ բան չ'ասեն:

— Թէ լաւ, օղորմի հօրդ. դէ դու էլ գնա, անսաս մտիր օդէդ ու սուս կաց, մըթամ թէ հէջ բանի խաբար չես, — ասաց նա և թփի տակից օձի հման սողաց դէպի Ղահրաման աղի տուն, ուր՝ աղջատների վառելու հասարակ ճրագ չունենալու հակառակ. Նովրուզովը ո՞չ միայն երկու-երեք եւրոպական լավտերներ ունէր վառած ներսը, այլ և ֆօնար՝ դուրսը սիւնի ճակատից կախած:

Միքէլն արդէն մտել էր խրճիթը, երբ Գիքօն արագութեամբ մօտենում էր Ղահրամանի բակին: Այդ միջոցին խումբն արդէն շարուել էր սեղանի շուրջը: Մէջ տեղը բազմել էր աղէն, հանդէպը խանումը, աջ ու ձախ Պէտօն ու Ղիտրին և ապա բէղալթին ու միւսները:

Թամադան ընտրուել էր Թաթին: Սրա բարեմաղթութիւններով սովորական օղին կամ անծուխ կրակն, ինչպէս իրենք էին անուանում սրախօսութեամբ, արդէն դատարկել, մի կողմն էին դրել և զինու գաւաթները լցրած, չխրթմի ամաններն առաջներն էին քաշել ու պատառաներն ադահաբար թաթախում, կլանում էին, և ոսկորները կուծելով, չոբանների նման սփոռոցը թողած, շպրտում, ձգում էին դրան տակը, ուր դրսից ներս ժողովուած տասնեակ շները՝ մինը միւսից խլելով, թանթլիկների

արանքն առած՝ զրճզրճացնում էին ոսկորները և թշնամաբար, խէթ-խէթ նայելով, լանթ տալիս, բոթացնում ու ժնզժնզացնելով մռմռում էին իրար վրայ:

Թամադա Թաթին նկերակրի թաբախը գլխին քաշելով և թեքերովն աջ ու ձախ լափոտուած բեխերը սրբելուց հետոյ, առաւ գինով լի գաւաթը և իորին ակնածութեամբ ու սիրով առաջարկեց տանուտէր Պէտովի կենացը, որի մասին դրուատեց ինքն աղէն:

— Պարոն տանուտէր, քու կենացը, Աստօծ քեզ պէս գատաւերին համեշա մեր գլխին սաղ պահի, որ միշտ սհէ ուրախութենի ու քէփի մէջ լինենք... Վերջացրեց Ղահրամանը, գոչեցին, կրկնեցին՝ միւսները և, ուռա, ուռա, աղաղակելով, գլխներին քաշեցին ու ծարաւ գոմէշների պէս մինչև յատակը ծրծելով, վալր դրին գաւաթները և շարունակեցին ոչ թէ մարդապարի ուտել, այլ մշոռել գալլերի նման:

— Տիրացու Թաթի, շնորհակալ եմ, որ դու իմ սաղութինը խմեցիր, միայն, ամենից առաջ գալիք էր, որ Ղահրաման աղինը խմուէր, — երկրորդ անդամ բեղերը սրբելով, առաջարկեց Պէտօն:

— Աղա, քու աղիզ թանկադին կենացը. Աստօծ քեզ պէս հացով ու ջրով աղաներին համեշա անպակաս անի մեր և մեր գեղի գլխից: Աստօծ, քու ջրին էն բարաքաթը տայ, որ ըշխարիս ձեռը պակաս քեսոիրնին

չիմ քու գուռը գան, քու ձեռին մտիլ տան ու քեզ  
պարտական մնան...

— Ուռան, ուռան...

— Ուռան, ուռան...

Աղա, քու կենացը, շատ ապրես, խանըմի հետ  
ապրես, մի բարձի ծիրանաք ու աւելի փառքով  
լիանաք:

— Աղա, շատ ապրես, ինչքան, քու սիրտը կուղի...

Սակայն, մինչդեռ «շատ ապրես»-ը կրկնում էր,  
յանկարծ մի կայծակ տրաքեց: Դրսից թնդաց ու  
ճայթեց Գիքոյի հրացանը, թէ չէ, Ղահրաման աղէն  
հարամու նման՝ դեռ բաժակը՝ չդադարկած տապալուց  
գետին:

Արեան ծովն սկսեց պտոյտ գալ սեղանի  
շուրջը մեծ շիոթութիւն ընկաւ տունը: Ամենքն  
ահարեկուած փախչում էին. ոմանք դէպի դուրս  
ոմանք դէպի ներսի սենեակները, լաց, կոծ, սուզ ու  
շիւանով մի վարկենում դղրդաց ուրախութեան տունը.  
Հարամուեց ամենի կերածն ու խմածը, ամբողջ գիւղը  
տակն ու վրայ եղաւ: Վայ, աղին սպանեցին, հասէք  
հայ, բռնեցէք, օգնեցէք հայ,— աղաղակում էին ա-  
մենքը և վազում դէպի տուն և դէպի մութը հո-  
վիտը: Ճներն ունում, կլանչում էին աղիողորմ ձայ-  
նով. ար ու ձոր աղաղակ էր դարձել և միմիայն  
բուն էր, որ ձախը կտրել էր և շառագունած երկն-

քի մի մասը կրկին իւր գոյնն ստացել, թէ չէ,  
ամբողջ գիւղը վայոց ձոր էր դարձել:

Բարեկամ, ազգական, հարեան, խնամի, ընկեր  
և ազն, զուր էին շրջապատել ընկած հարամու հըս-  
կայական դիակին, էլ օգնութիւն չկար. գնդակը դի-  
ւել էր Ղահրամանի որտի գդալին, լավել էր սիրտը,  
քայքայել կուրծքը և արնաթաթախ լերթ ու թոքը  
միւս կողմից հանել: Զուր էին նոյնպէս դատաւոր-  
ների ձեռք առած միջոցները քաջ որոկանին գտնելու  
համար:


Գիքօն վաղուց արդէն անյայտանալով Կ.  
գիւղի սահմաններից, մտել էր Պէ, և հրացանի  
լուլից մի քանի անգամ սրտալի համբուրելուց յետով,  
այստեղ խաղաղ սրտով ու լի բաւկանութեամբ սըր-  
բում, մաքրում էր վառօղից կեղտոտուած տեղերը,  
տալով ուսուցչին վաշխառուի կեանքի իրական պատ-  
կերը, որ նա էլի մտածի, էլի զբաղուի ու աշխատի  
բարւոքել Աղքատի հալը Մոռացուած աշխարհում:

Ա Ն Ր Յ

ԳՐԱԴԱՐԱՆԸ

Ա Ր Ի Պ Ա Կ Ն Ե Բ

Երես.	Տող.	Տպուած է.	Պիտի և լինի.
14	3	յըւիենական	յըւիտենական
21	7	հարստի	հարստի
23	23	նա-	նա
27	9	թերանները	թերանները
36	19	ժերկացընել	ժերկացընել
42	25	տախո	տախո
42	25	աղի	աղի
45	26	շուրած	շուրած
46	4	դու արի	դուս արի
61	17	մէէլը	մէէլը
63	22	ձիռով դուրա	ձիռով դուրա
64	20	չզուրճանալին	չզուրճանալին
67	4	ծանրասացնել	ծանրասացնել
67	14	հակտափց	հակտափց
72	12	մամէլթ	մամէլթ
76	23	կր	կր
84	14	Ապրեան	Ապրեան



ԻՄ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԵՒ  
ՎԱԺԱՌԻՈՒՄ ԵՆ

1.	Մոռացուած Աշխարհ. զիրք Ա (սակաւաթիւ)	— 60
2.	“ ” “ ” Բ . . . . .	— 50
3.	“ ” “ ” Գ . . . . .	— 40
4.	Աղա Ս. Սարգիս... (սակաւաթիւ) . . . . .	— 15
5.	Աղքատի Հալը . . . . .	— 25
	Հինգը միասին զնողը կվճարէ . . . . .	1 թ. 35
	ՔՈՒՑԱՎ. ԼՈՅՍ ԿՏԵՄՆԵ	
6.	Քիւղի Այրին . . . . .	— 15

ՏՊԱԳԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԾՈՍ ԵՆ

1. Մոռացուած Աշխարհի Դ. և Ե. զրբերը.
2. Ջրինանց Նախուռնը.
3. Մնիեղար Վարդապետը.
4. Ս. Սարգիս (պատմականը).
5. Աղքատի Խաչը.
6. Կարկուտը զիւղում.
7. Աղքատի Ճմեռը.
8. Աւաստ Դեմ և Երա Համբեարը:

Ապառիկ ոչ ոքի չենք ուղարկիլու Հարիւրով դնողանիքին 25% զիջումն:

Ելմել, Թիվելիս, Թանգոյեան Ս. Աստ. Ելեղեցի. Միքայելեան փողոց. ՅԱՐԱՒԹԻՒՆ ՔԱՅ. ՃՈՒՂԱԲԻՐԵԱՆՑԻՆ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0355131

41.154

891.99.  
S-97